ՀՀ ԳԱԱ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԵՎԱ ԺՈՐԱՅԻ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԳՐԱՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Ժ. 01. 01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2021

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալիտա Գուրգենի Դոլուխանյան

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Լաուրա Գուրգենի Մուրադյան

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սամվել Պարգևի Մուրադյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2021 թ. դեկտեմբերի 10-ին՝ ժամը 12:30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի՝ Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015 Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. հոկտեմբերի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ բան. գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Մարգարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գրականության մեջ դասական արժեքների, հատկապես մեծ անհատականությունների ստեղծաբանական ժառանգությունը պատմական հեռավորությունից ճիշտ գնահատելու և մեկնաբանելու իմաստով խիստ կարևորվում է այդ արժեքների ստեղծման ընթացքին ականատես քննադատության փորձը՝ և՛ ճիշտ կռահումները, հեռահար կանխատեսումները, և՛ վրիպումները:

Հ. Թումանյանը՝ իբրև ստեղծագործող, առաջին քայլերից եղել է ընթացիկ քննադատության ուշադրության կենտրոնում: Նրա յուրաքանչյուր ստեղծագործություն ուղեկցվել է բուռն բանավեճերով, թեր ու դեմ կարծիքների բախմամբ, որոնց ընթացքում հաճախ ձևավորվել են գրականագիտական չափանիշներով հետաքրքրություն ներկայացնող խնդրահարույց ու հեռանկարային հարցադրումներ, որոնք անգամ այսօրվա ուսումնասիրողին նոր ու առավել խորքային քննության գաղափարներ կարող են հուշել:

Ատենախոսությունը ներկայացնում է ավելի քան երեք տասնամյակների ընթացքում Թումանյանի ստեղծագործությանը ուղեկից գրաքննադատության արձագանքների ամբողջական ուսումնասիրությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքի նպատակն է փաստական հավաստիությամբ ցուցանել ստեղծագործական ճանապարհը, որով անցել է ամենայն հայոց բանաստեղծը, այն դժվարություններն ու արգելքները, որ ստիպված է եղել հաղթահարել կայացման ու ինքնահաստատման համար, ի մի բերել ժամանակի գրաքննադատության գնահատումների ամբողջությունը, որը հետագայում դարձել է Թումանյանի ստեղծագործական աշխարհի բացահայտման ու մեկնաբանման համաբնագիր:

Ատենախոսության գիտական խնդրադրությունը լուծելու համար առաջադրել ենք հետևյալ քայլաշարը.

1. հավաքել և ի մի բերել Հ. Թումանյանի ստեղծագործությանն ուղեկից գրաքննադատության գրեթե բոլոր արձագանքները՝ գրախոսություններ, հոդվածներ, լրագրային առաջնորդողներ, մենագրություններ,
2. ուսումնասիրել Թումանյանի ստեղծագործության վերաբերյալ հնչած կարծիքները՝ նորովի գնահատելով դրանց պատմաճանաչողական արժեքը,
3. բացահայտել գաղափարական հիմունքները, որոնց վրա խարսխվել են Թումանյանի արվեստի գնահատման սկզբունքները,
4. ամբողջացնել ժամանակի գրաքննադատական մտքի՝ գրական-ստեղծաբանական ընթացքի արժեքների ըմբռնման հայեցակետերը,

5. ամրագրել Թումանյանի գեղարվեստական աշխարհը բնութագրող, հետագայում խոր և հիմնարար վերլուծության առիթ դարձած հատկանիշներ:

ԹԵՄԱՅԻ ՆՈՐՈՒՅԹԸ, ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեկ դարից ավելի է՝ Հ. Թումանյանը գտնվում է հայ գրականության ստեղծագործական ընթացքի մեջ: Գրականագիտության մեջ և՛ հընթացս, և՛ հետագայում նրա մասին ստեղծվել են բազմաթիվ արժեքավոր ու լրջագույն ուսումնասիրություններ, որոնք վստահաբար հիմք են տալիս խոսելու նախընթաց թումանյանագիտության պատմության մասին: Սակայն Թումանյանի ստեղծագործական աշխարհի, գրական-գեղագիտական հայացքների ամբողջական և համակողմանի ընկալման, բացահայտման, գնահատման տեսանկյունից մինչ այսօր առանձին ուսումնասիրության առարկա չեն դարձել ժամանակի գրական քննադատության արձագանքները, որոնք բազմատեսակ ու տարաբնույթ վերլուծություններով ձևակերպել են Թումանյանի գրականության տեսությունը, մեկնաբանել ստեղծագործությունների փիլիսոփայական, գեղագիտական հղումները: Մեր աշխատանքը լրացնում է այդ բացը:

Ատենախոսությունն ունի արդիական նշանակություն. անցյալում շրջանառված կարծիքներն ու տեսակետները համեմատելով գրական իրողությունների, ներկա ձևակերպումների հետ՝ ոչ միայն հանգում ենք գիտականորեն հիմնավորված եզրակացությունների ու տեսական ընդհանրացումների, այլև նոր դիտանկյունից բացահայտում Թումանյան բանաստեղծին ու մարդուն, նաև ժամանակի քննադատության հայտնի և անհայտ դեմքերին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Բուն խնդիրների լուծման նպատակով պատմահայաց քննություն կատարելիս օգտվել ենք գրականագիտական մի քանի մեթոդներից: Ժամանակի ընթացիկ վիճակի առթած հարցադրումների, Թումանյանի արվեստի գնահատման քննությունը իրականացրել ենք կենսագրական, պատմահամեմատական, զուգադրական մեթոդներով: Գրական-քննադատական մտահայեցությունը քննաբանել ենք Հ. Թումանյանի կենսապատումի, ժամանակագրորեն տարանջատված առանձին շրջափուլերի հիման վրա՝ մեր խնդրի քննությունը զուգադրելով հասարակական միջավայրի ճանաչողության, սոցիալ-քաղաքական և փիլիսոփայական հարցադրումներով: Պատմահամեմատական մեթոդով ուսումնասիրել ենք պատմաշրջանի գրաքննադատության ընթացքը, կրած փոփոխությունները՝ միաժամանակ համեմատության մեջ դնելով

քննադատական մտքի տարրմբռնումներն ու դրանց ձևավորման հիմքերը, այն ընդհանրությունները, որոնք ի վերջո ձևավորել են թումանյանական աշխարհի հիմնակառույց սյուները: Գրական ժամանակի ներքին օրինաչափությունների, նշանակիր իրողությունների, ընդհանրությունների և տարբերությունների քննությունից ի վերջո ստեղծվել է մի զարմանալի և բազմաշերտ համաբնագիր, որը ներկայացրել ենք հերմենևտիկայի մեթոդով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ուսումնասիրության տեսական-մեթոդաբանական հիմք են հանդիսացել գրաքննադատության և թումանյանագիտության նախորդ փորձի գրապատմական տեսության հիմնահարցերն ամփոփող հայ և արտասահմանյան հեղինակների՝ թեմային առնչվող հետազոտությունները: Շրջանառության մեջ են դրվել այդ ժամանակահատվածը բնորոշող հայ ժողովրդի պատմության, ի մասնավորի՝ թեմային աղերսվող հասարակական հոսանքների ձևավորմանը և աշխարհայացքային դրսևորումներին վերաբերող փաստական նյութեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ

Ատենախոսության փաստական նյութ հիմնականում դարձել են 1890-1923 թթ. տպագրված հայ և արտասահմանյան հայալեզու մամուլը, գրական-հասարակական հանդեսները, Թումանյանին ուղղակի կամ անուղղակի առնչվող մենագրությունները, դասագրքերը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել գրականության տեսաբան-քննադատներին, Հ. Թումանյանի կյանքի և ստեղծագործության հարցերով զբաղվողներին, բանասերներին: Աշխատանքի նյութերը կարող են կիրառվել նաև բուհական դասընթացներում՝ մասնավորապես գրաքննադատության պատմությունն ուսումնասիրելիս, Թումանյանին նվիրված դասախոսությունների ընթացքում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնական դրույթները հոդվածների տեսքով ներկայացված են ՀՀ ԲՈԿ-ի կանոնադրությամբ հաստատված գիտական ամսագրերում, ինչպես նաև արտասահմանյան գիտական ամսագրերում (տես հրապարակումների ցանկը սեղմագրի վերջում):

Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի թումանյանագիտության բաժնում և

քննարկվել է նույն ինստիտուտի Հայ նոր գրականության բաժնում: Ատենախոսությունը երաշխավորվել է հրապարակային պաշտպանության:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից և գրականության ցանկից: Ամբողջական ծավալը 610 էջ է:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացվում են Հովի. Թումանյանի գրական ժառանգության վերաբերյալ ժամանակին հնչած կարծիքների ու տեսակետների պատմահայաց քննության անհրաժեշտությունը, հետագա շրջանի թումանյանագիտության պատմատեսությունը, արժեքավոր, առանցքային ուսումնասիրություններն ու հոդվածները: Մատնանշվում են բանաստեղծի գրական ճանապարհի պարբերացման չափանիշները, ուսումնասիրության արդիականությունը, նպատակը, խնդիրները, մեթոդական հիմքերը և կիրառական նշանակությունը:

ԳԼՈՒԽ 1.
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹԹ. ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Առաջին գլուխը բաղկացած է հինգ ենթագլխից. ներկայացնում է XIX դարի 90-ական թթ. գրական քննադատության համապատկերը և նրա արձագանքը Հ. Թումանյանի ստեղծագործական առաջին շրջանում (1890-1899) տպագրված երկու ժողովածուների (1890, 1892), առանձին ստեղծագործությունների («Լոռեցի Սաքոն») և կատարած թարգմանությունների («Շիլիոնի կալանավորը», «Մծիրի») վերաբերյալ:

1.1. 19-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹԹ. ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

Առաջին ենթագլուխը ներկայացնում է 19-րդ դարի 90-ական թթ. հասարակական հոսանքների գաղափարական տարաձայնությունների կիզակետում հայտնված գրականությանն ու քննադատությանն աղերսվող խնդիրները: Կուսակցական կամ, ինչպես այն ժամանակ ընդունված էր ասել, թայֆայական կողմնակալությունը քննադատությանը գրեթե զրկել էր գրական արժեքները ըստ էության գնահատելու հնարավորությունից, մանավանդ եթե նկատի ունենանք նաև, որ այդ բնագավառը շատ կողմերով դեռևս կայացման և ինքնագիտակցման խարխափական ընթացքի մեջ էր:

Առհասարակ ժամանակի թե՛ արևելյան, թե՛ արևմտյան հայտնի հանդեսներում և թերթերում սկսում են ավելի հաճախակի արծարծվել գրականությանն ու քննադատությանն առնչվող տեսական ու գործնական բազմաթիվ հարցեր՝ առիթ տալով ուշագրավ բանավեճերի: Այդ տեսակետից բավական հետաքրքիր և սուր հարցադրումներ են կատարվում Շիրվանզադե - Գր. Արծրունի, Ա. Չոպանյան - Ա. Արասխանյան, Ա. Անտոնյան - Ա. Արասխանյան, Ն. Աղբալյան - Ն. Շահնազարյան և բանավիճային այլ հոդվածներում: Նկատենք, որ այդ բանավեճերում, անկախ իրարամերժ հայեցակետերից, ուրվագծվում են քննադատությանը ներկայացվող պահանջներ, որոնց միավորումից ու համակարգումից ի վերջո պետք է ձևավորվեր հայ դասական քննադատության ամբողջական և համալիր տեսությունը:

19-րդ դարի 90-ական թվականները հայ իրականության մեջ նշանավորում են քննադատության պատմության զարգացման մի նոր շրջափուլ, որ բնորոշվում է մի շարք տեսագործնական խնդիրների առաջադրմամբ, դրանց լուծմանը միտված կոնկրետ քայլերի ձեռնարկմամբ: Իբրև հետազոտության առանձին բաժին՝ քննադատությունը գրեթե որոշակիացնում է իր էական գործառույթները՝ դրանով իսկ հաստատուն հիմքերի վրա դնելով քննադատության գիտականացումը:

Հ. Թումանյանի ստեղծագործությունները գրաքննադատության տեսադաշտում հայտնվում են տարբեր առիթներով: Պայմանավորված քննադատների գեղագիտական նախասիրություններով, կուսակցական դիրքորոշմամբ, մարդկային ու բարոյական որակներով՝ դրանք քննվում և գնահատվում են տարբեր մեթոդներով ու խորություններով: Գրախոսությունների մի մասն ամբողջությամբ է քննել Թումանյանի բանաստեղծական աշխարհը, մյուս մասը մեծ կամ փոքր չափով բանաստեղծին անդրադարձել է գրականության ընդհանուր խնդիրների համատեքստում: Այս ժամանակահատվածում առաջին անգամ մատնանշվում են Հ. Թումանյանի ստեղծագործական աշխարհը ուրվագծող որոշ նրբերանգներ, որոնք հետագայում պիտի դառնային նրա բանաստեղծական մտածելակերպի առանձնահատկությունները պայմանավորող հատկանիշներ:

1.2. Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԻԲՐԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԷՊԻԿ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՅՏ

Սույն ենթագլխում ներկայացվում են Թումանյանի գրական մուտքը ազդարարող «Բանաստեղծություններ» անդրանիկ գրքի արձագանքները, որոնք տարաբնույթ էին՝ զրույցներ, անմիջական շփումներ, նամակներ, գրախոսականներ: Մանրամասնությամբ անդրադառնում ենք Ազ-Լերի (Խ. Մալումյան, «Մշակ»), Մ. Աբեղյանի («Նոր-Դար») և Լ. Մանվելյանի

(«Մուրճ») գրախոսականներին: Նկատում ենք, որ գիտականորեն ստույգ դիտարկումներով առանձնանում է Մ. Աբեղյանի անդրադարձը: Քննադատության պատմության մեջ քիչ է պատահում, որ որևէ առաջին գրքի առաջին գրախոսի բոլոր դիտողություններն արդարացվեն գրողի ստեղծագործության զարգացման հետագա փորձով և վավերացվեն այլ ուսումնասիրություններով: Այդ քչերից էր Թումանյանի անդրանիկ ժողովածուի մասին Աբեղյանի գրախոսական հոդվածը:

Առաջինը Աբեղյանն է, որ մասնագիտական բացառիկ լրջությամբ խոսում է բանաստեղծի ժողովրդայնության մասին թե՛ ձևի, թե՛ բովանդակության տեսանկյունից, մի հասկացություն, որ սկսում է լայնորեն շրջանառվել հատկապես խորհրդային շրջանի թումանյանագիտության մեջ՝ հաճախ հեռանալով իր նախնական իմաստից և դառնալով ժամանակի պաշտոնական գաղափարախոսության կցորդ: Աբեղյանի ակնարկած ժողովրդայնությունը, որ, իրոք, Թումանյանի ստեղծագործության համակարգային ամբողջականությունը պայմանավորող գլխավոր գործոններից է, կապ չունի հասարակական-գաղափարական կամ կուսակցական որևէ նախասկզբի հետ:

Աբեղյանի երկրորդ դիտարկումը վերաբերում է Թումանյանի ստեղծագործական խառնվածքին, որի բնորոշ հատկանիշը համարում է վիպականությունը՝ ընդգծելով, թե նա էպիկական պոեմներում ավելի հաջողություն ունի, քան քնարերգության մեջ:

Լ. Մանվելյանը՝ իբրև բանաստեղծ-քննադատ, Թումանյանի ժողովածուն դիտում և արժեքավորում է արդեն ինքն իր մեջ՝ քննության նյութ ունենալով բանաստեղծական բուն բնագիրը: Բնագրային քաղվածքներով հիմնավորելով իր դիտարկումները՝ գրախոսն ընդգծում է հեղինակի ստեղծագործական այն նախասիրությունը, որ նկատել են Թումանյանի գրեթե բոլոր ժամանակակիցները. «Նա իր պոեմների մեջ նման չէ ո՛չ մեր հին, ո՛չ նոր բանաստեղծներին, նա կանգնած է առանձնակի, նա ինքնուրույն է, նա մի տեսակ նորություն է մեզ համար: Այդ առանձնահատկությունը **ժողովրդական տարրն** է, որ և կազմում է նորա վիպական ոտանավորների իսկական զարկերակը»[1]:

Հ. Թումանյանի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուի շուրջ արտահայտված կարծիքները, որքան էլ իրարամերժ ու հակասական, հաստատում էին մի ճշմարտություն. գրական ասպարեզ է մտել մի բանաստեղծ, որ բարեկամներին ոգևորում է, իսկ հակառակորդներին վախեցնում ստեղծագործական հնարավորություններով:

Հայ գրականագիտության փորձը ցույց է տալիս, որ առաջին քննադատների շատ տեսակետներ՝ դրական թե բացասական, ըստ էության հիմք են դրել ուսումնասիրության մի առանձին բնագավառի, որ ապագայում պիտի կոչվեր թումանյանագիտություն:

[1] «Մուրճ», հմ. 1, Թիֆլիս, 1891, էջ 95:

1.3. «ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԵՐԿՐՈՐԴ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԻԲՐԵՎ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ՆՈՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Այս ենթագլխում ներկայացնում ենք 1892 թ. նոյեմբերի վերջին Մոսկվայում լույս տեսած «Բանաստեղծություններ» 2-րդ ժողովածուի արձագանքները, որոնք, բացի Ղ. Աղայանի «Հովի. Թումանյանի «Անուշ»-ից մի ճաշակ» փոքրիկ հոդվածից («Մուրճ»), առավելապես ընկերներից ուղարկված նամակների տեսքով էին: Գրապատմական առումով Աղայանի հոդվածը գնահատելի է ջերմ բարյացակամության շեշտադրությամբ և իբրև առաջին ու միակ տպագիր խոսք[2] «Անուշ» պոեմի մասին:

Ընկերների ու բարեկամների հիացական ու խրախուսական նամակներում սուբյեկտիվ, երբեմն անընդունելի կարծիքների կողքին կային նաև հիմնավոր գնահատականներ, որոնք օգտակար դասեր էին պարունակում երիտասարդ բանաստեղծի համար, նաև ինչ-որ բացատրություններ՝ գրքի հանդեպ հասարակական լռության, որ նույնպես յուրօրինակ բնութագիր էր ոչ միայն Թումանյանի ստեղծագործության, այլև այն միջավայրի, գրական մթնոլորտի, որտեղ ապրում էր նա: Բարեկամական այդ նամակները ինչ-որ չափով ծածկում էին պաշտոնական քննադատության բացը ամենից առաջ նրանով, որ արտահայտում էին ժամանակի գրական-գեղագիտական պատկերացումներն ու ճաշակը, որովհետև նամակների հեղինակները հոգևոր աշխարհի մարդիկ էին, գրական մտավորականության ճանաչված ներկայացուցիչներ:

Նամակագիրները, ինչպես պոեմներում, որի մասին ակնարկում էին նաև առաջին գրքի քննադատները, այնպես էլ բանաստեղծություններում իրենց բանաստեղծ ընկերոջ ուշադրությունը հրավիրում էին ձգձգվածության, ավելորդ մանրամասների վրա: Սա պատահական դիտարկում չէր. ստեղծագործական ոգևորության պահին ստեղծագործողն ինքը հաճախ չի նկատում դա, բայց հետահայաց ընթերցման ժամանակ զգում է ավելորդությունների վերացման անհրաժեշտությունը: Հատկապես պոեմների մշակման թումանյանական փորձը դրա պերճախոս վկայությունն է: Բարեկամների դիտողությունն այս դեպքում անկասկած օժանդակել է բանաստեղծին:

---

[2] Ղ. Աղայանից հետո երկրորդ գրքի մասին գրախոսականի մեզ հայտնի միակ նմուշը Տիգրան Փիրումյանի «Մի ճշմարիտ բանաստեղծ (պ. Հովի. Թումանյանի նոր գրքի առիթով)» հոդվածն է (1893), որտեղ նա շեշտում է երիտասարդ հեղինակի բանաստեղծական արտակարգ տաղանդը՝ վկայակոչելով առաջին ժողովածուն: Փիրումյանն այն հաստատ համոզմունքին է, որ Թումանյանն իր մի շարք գործերով միանգամայն իրավունք կունենա կանգնելու եվրոպական հայտնի բանաստեղծների՝ Բայրոնի, Շիլլերի, Գյոթեի, Պուշկինի, Լերմոնտովի հետ «մի գծի վրա» (առաջին անգամ այս հոդվածի մասին հիշատակում է Ա. Ինճիկյանը: Ինքնագիրը պահպանվում է ԳԱԹ-ում՝ Տ. Փիրումյանի արխիվում՝ հմ. 19 փաթեթում: Հոդվածն ամբողջությամբ առաջին անգամ տպագրվել է «Հովհաննես Թումանյանը ժամանակի գրաքննադատական մտքի գնահատությամբ (1890-1913)» ժողովածուում (հ. 1, Երևան, 2019, էջ 31-34):

Հարցը, թե ինչու Թումանյանի երկրորդ ժողովածուն չունեցավ սպասված արձագանքը, հետագայում զբաղեցրել է նաև գրականության պատմաբաններին: Ըստ Ա. Ինճիկյանի՝ լռության պատճառը թերևս Թումանյանի անկախ դիրքորոշումն էր դեպի մամուլը. 1892 թ. վերջերին, երբ նոր էր հրատարակվել Թումանյանի երկրորդ ժողովածուն, բանաստեղծը մասնակցում էր Արծրունուց և «Մշակից» դժգոհ գործիչների ժողովներին, համարվում էր «Մշակի» հակառակորդ, «Նոր-Դարն» էլ «Թումանյանին «իր մարդը» չէր հաշվում, նկատի ունենալով կաթողիկոսական ընտրության շուրջ ծավալված «կուսակցական» պայքարում նրա դիրքը»[3]:

Թումանյանի երկրորդ ժողովածուն ավելի հարուստ ու ընդգրկուն էր առաջինի համեմատությամբ, ավելի մշակված: Բայց այն բարձր որակական թռիչքը, որ սպասում էին նրանից, և որ պիտի իրականացվեր երրորդ ժողովածուով, դեռևս չկար: Դրա համար պետք է պահանջվեր ստեղծագործական զարգացման մի ամբողջ տասնամյակ:

1.4. ԼՈՌԵՑԻ ՍԱՔՈՅԻ ԽԵԼԱԳԱՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Այս ենթագլխում անդրադառնում ենք Թումանյանի պոեմների շարքում իր ստեղծագործական ճակատագրով առանձնացած «Լոռեցի Սաքոյին», որ, դեռ չտպագրված, երկու անգամ տպագրվելուց հետո էլ ինչպես պաշտոնական քննադատության կողմից, այնպես էլ ընթերցողական մակարդակում արժանացել է բազմաթիվ հակասական գնահատականների, որ հարկադրել են բանաստեղծին տարիների ընթացքում բազմաթիվ փոփոխություններ կատարել պոեմի բնագրում՝ ստեղծելով երեք ամբողջական տարբերակներ: Քննադատության հիմնական թիրախ են եղել պոեմի թեման և հերոսի խելագարվելու հոգեբանական պատճառաբանվածությունը: Սաքոյի խելագարության հոգեբանական հիմնավորվածության վերաբերյալ բոլոր դիտողությունները Հ. Թումանյանը պոեմը վերամշակելիս միշտ աչքի առաջ էր ունենում, բայց ոչ թե դրանից հրաժարվելու, այլ այդ հիմնավորվածությունը ավելի համոզիչ դարձնելու համար, որ հստակ նկատելի է պոեմի երկրորդ տպագիր տարբերակում: Ասենք, որ գրականության մեջ վաղուց արդեն լուծված է այդ խնդիրը. Էդ. Ջրբաշյանը «Թումանյանի պոեմները» աշխատության մեջ համոզիչ փաստարկումներով հիմնավորում է պոեմի հիմքում ընկած կենսական փաստի հավանականությունն ու հավաստիությունը[4]:

---

[3] Ինճիկյան Ա., Հովհաննես Թումանյան. կյանքի և ստեղծագործության պատմությունը, Երևան, 1969, էջ 326:

[4] Տես Ջրբաշյան Էդ., Թումանյանի պոեմները, Երևան, 1986, էջ 113-125:

«Լոռեցի Սաքոն» պոեմի մասին ժամանակի քննադատները, մեկ-երկու բացառությամբ միայն, իրենց դիտողությունները կառուցել են արտաքին տպավորություններով, հատկապես կենցաղային այն պատկերացմամբ, թե ուժը, քաջությունը և վախի զգացումը անհամատեղելի են, ուստի Թումանյանի ստեղծած կերպարը հոգեբանորեն անհամոզիչ է: Ճիշտ է նկատել Էդ. Ջրբաշյանը, թե տրված գնահատականներում «ոչ միայն նսեմացվում էր պոեմի գեղարվեստական ուժը, այլև անտեսվում էր նրա նպատակադրման առանձնահատկությունը՝ ցույց տալ, որ նահապետական մարդու հոգեբանության վրա այնքան ուժեղ է սնահավատ ավանդության իշխանությունը, որ նույնիսկ Սաքոյի նման քաջ մարդը կարող էր հոգեկան հավասարակշռությունը կորցնել»[5]:

Այսօր ավելի քան հարյուրամյա հեռավորությունից, նկատի ունենալով նաև ժամանակակից գրականագիտության փորձը, պետք է ասել, որ «Լոռեցի Սաքոն» պոեմը գեղարվեստական անթերի պատկերներով ոչ միայն ներկայացնում է հայ նահապետական գյուղը՝ իր բնորոշ կողմերով, բնաշխարհն ու միջավայրը, այդ միջավայրում ծնված ու մեծացած մարդու մտածելակերպն ու հուզաշխարհը, այլև բանալիներ է տալիս Մարդու թումանյանական իդեալը ճանաչելու և բնութագրելու համար, խնդիր, որ հատուկ ուշադրության չի արժանացել ո՛չ ժամանակի քննադատության, ո՛չ հետագա ուսումնասիրողների կողմից:

1.5. Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ («ՇԻԼԻՈՆԻ ԿԱԼԱՆԱՎՈՐԸ», «ՄԾԻՐԻ»)

1.5. ենթագլխում ներկայացրել ենք ժամանակի քննադատության՝ Թումանյանի անդրանիկ թարգմանությունների արձագանքները: 1896 թ. առանձին գրքույկներով տպագրվում են Ջ. Բայրոնի «Շիլիոնի կալանավորի» և Մ. Լերմոնտովի «Մծիրիի» թարգմանությունները, որոնք լույսընծայումից անմիջապես հետո և հետագայում էլ մշտապես եղել են քննադատների ուշադրության կենտրոնում:

«Շիլիոնի կալանավորի» թարգմանությունը բացառիկ վկայությունն է այն բուռն հետաքրքրության, որ 90-ական թթ. հանդես է բերել Թումանյանը անգլիացի մեծ բանաստեղծի նկատմամբ. վերջինիս ստեղծագործությամբ տարվելը բանաստեղծին օգնում է ճանաչելու անհատի ազատության նվիրական գաղափարները և արտահայտելու իրականության նկատմամբ անհատի քննադատական ոգին: Այդ շրջանում (թումանյանագիտության մեջ այն կոչվել է «բայրոնիզմի շրջան») պոեմը մի շարք հատկանիշներով համապատասխանում էր հայ բանաստեղծի հասարակական և անձնական տրամադրություններին:

[5] Նույն տեղում, էջ 114-115:

Նշելի է 1903 թ. մայիսի 9-ի նամակում Մ. Տեր-Անդրեասյանի անթաքույց զարմացախառն հիացմունքը. ««Շիլիոնդ» համեմատեցի բնագրի հետ: Ուղղակի զարմանալի է, թե ինչպե՞ս է հաջողվել քեզ անգլերեն չիմանալով մի այդպիսի հոյակապ թարգմանություն տալ մեզ: Համարյա բառացի... սակայն առանց խորթությունների, կանոնավոր հայերեն լեզվով, այնքան տողը բառացի, մոտիկ բնագրին, որ նույնիսկ կարճ ու երկարությունը, նույնիսկ հանգերը շատ տեղ նույն բառերիցն են»[6]:

Ի տարբերություն վերոնշյալի՝ այլ էր «Մծիրիի» առաջին արձագանքը: 1896 թ. «Մուրճի» հմ. 5-ում լույս է տեսնում Հար. Թումանյանի գրախոսականը Լերմոնտովի «Մծիրիի» երկու թարգմանությունների մասին: Գրախոսը, բնագիրը համադրելով Հ. Տեր-Գևորգյանի և Հ. Թումանյանի թարգմանությունների հետ, կատարում է համեմատական քննություն: Ակներև են այն ճիգերը, որոնք գործադրում է Թումանյանի թարգմանությունը թերագնահատելու և Հ. Տեր-Գևորգյանի՝ գեղարվեստական արժեքից զուրկ, թույլ թարգմանությունը արհեստականորեն բարձրացնելու ուղղությամբ: Անշուշտ, զարմանալի և վիճարկելի է այս կարծիքը. Թումանյանի թարգմանությունը ցայսօր էլ պահպանել է իր գեղարվեստական բարձր արժեքը: Արձանագրենք միայն, որ «Մծիրիի» այս թարգմանությունը Թումանյանը հետագայում զգալի փոփոխությունների է ենթարկել:

Լերմոնտովի և Բայրոնի պոեմների թարգմանությունները խոսուն վկայություններն են Թումանյանի՝ թարգմանական արվեստին տիրապետելու, թարգմանվող երկին ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու բացառիկ կարողության: Ուստի պատահական չէ, որ առաջին գրքույկները, իսկ ավելի ուշ թարգմանական այլ ստեղծագործություններ մշտապես արժանանում են քննադատության բարձր գնահատությանը:

ԳԼՈՒԽ 2.
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1900-ԱԿԱՆ ԹԹ. ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Ատենախոսության երկրորդ գլուխը բաղկացած է չորս ենթա-գլխից. ներկայացնում է 1900-ական թթ. գրական քննադատության աշխարհայացքային, գաղափարական ու մեթոդաբանական տարբերությունները, այդ համապատկերում ժամանակի գրաքննադատության արձագանքները Հ. Թումանյանի՝ ստեղծագործական երկրորդ շրջանում (1900-1909) տպագրված ստեղծագործությունների վերաբերյալ: Ստեղծագործական այս փուլը կարելի է համարել ամենաբեղմնավորը, իսկ արձագանքների առումով՝ ամենախայտաբղետը:

[6] Թումանյան, ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 5, Երևան, 1998, էջ 291:

2.1. ԴԱՐԱՍԿԶԲԻ ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

Այս ենթագլխում անդրադարձել ենք 1900-ական թթ. սկզբին հասարակական-ազգային կյանքի նշանակալից տեղաշարժերին, որոնք որակական որոշակի փոփոխություններ են առաջ բերում մշակութային կյանքում, ժամանակի գեղարվեստական գիտակցության մեջ: Հայ նոր գրականության պատմության մեջ այդ ժամանակահատվածն առանձնանում է գեղագիտական հոսանքների, ուղղությունների աննախադեպ խայտաբղետությամբ ու բարդ խաչաձևումներով: Խոսքը վերաբերում է ոչ միայն գրական դպրոցների փոխհաջորդական կամ զուգորդական գործառույթներին (ռոմանտիզմ, ռեալիզմ), այլև նորագույն գրական հոսանքների չհամակարգված բազմապիսի ներթափանցումներին (սիմվոլիզմ, ֆուտուրիզմ, նեոռոմանտիզմ և այլն):

Նոր դարասկզբին քննադատությունն արդեն հանդես էր գալիս լիովին ինքնորոշված կարգավիճակով՝ իբրև գրական կյանքի ինքնուրույն բնագավառ: Ասպարեզում շարունակում էր գործել մասնագետ քննադատների մի խումբ (Մ. Աբեղյան, Մ. Բերբերյան, Ա. Չոպանյան, Գ. Ենգիբարյան, Լեո և այլք), որ, գալով 19-րդ դարի 90-ականներից, առավել հստակեցրել էր իր նպատակներն ու անելիքները: Առաջնային են դառնում գրական առանձին երկերի լուրջ ու հիմնավոր ուսումնասիրությունները, վերլուծությունները, գրականության և կյանքի փոխհարաբերության, արվեստի հասարակական ու գեղագիտական կոչման, արժևորման չափանիշների և այլ հարցեր, որոնց շուրջ ձևավորվում են տարբեր, երբեմն էլ հակադիր տեսակետներ: Գործող քննադատների կողքին հանդես են գալիս նորերը, որոնք իրենց աշխարհայացքով և մեթոդաբանական սկզբունքներով հաճախ տարբերվում էին ինչպես հներից, այնպես էլ միմյանցից: Դարասկզբի գաղափարական իրարամերժ հոսանքների միջավայրում ձևավորվում են գեղագիտական նոր տեսություններ: Իր ակնհայտ ազդեցությունն է շարունակում պահել կուլտուր-պատմական դպրոցը, որ հայ իրականության մեջ ձևավորվել էր XIX դարի վերջերին, բայց XX դարի առաջին տասնամյակում նրա սկզբունքները դեռևս ընդունելի էին հայ քննադատներից շատերին: Գրապատմական այդ իրողության ակնառու արտահայտություններից մեկը Լեոյի «Ռուսահայոց գրականությունը սկզբից մինչև մեր օրերը» ուսումնասիրությունն է և դրա շուրջ ծագած աղմկալի բանավեճերը:

Դրանց մենք անդրադարձել ենք երկու տեսանկյունից՝ իբրև ժամանակի գրաքննադատական միջավայրի, գեղագիտական-տեսական սկզբունքների ու բարքերի բնորոշ արտահայտության և այդ շրջանակներում Թումանյանի ստեղծագործության արժևորմանը՝ իբրև տիպական օրինակի:

1900-ական թթ. հայ քննադատությունը դեռևս չէր կարողանում ձերբազատվել աշխարհայացքային և մեթոդաբանական սահմանափակությունից, խուսափել ծայրահեղություններից: Ձևավորվել էր քննադատության երկու շերտ: Մեկը, որ ասպարեզը զբաղեցնում էր հաճախակի ելույթներով, ղեկավարվում պահի անցողիկ տպավորություններով կամ անձնական շահագրգռություններով, մյուսը, որ առիթից առիթ էր հայտնվում հրապարակում, նախընտրում էր վերլուծական օբյեկտիվ հայացքով մոտենալ գրական կյանքի նորանշան երևույթներին՝ արժևորելով դրանք զարգացման հեռանկարի դիտակետից: Այս երկրորդ շերտում էր կանխանշվում առաջընթացի գլխավոր ուղղությունը, որ առարկայական է դառնում 1910-ական թվականներին:

1900-ական թթ. քննադատությունը, կրելով ոչ համակարգված ու տարերային, հաճախ կուսակցական կողմնակալ բնույթ, այդպես էլ վերջնականորեն չի ձևակերպում իր պահանջներն ու չափորոշիչները. ուստի պատահական չէ, որ այս ժամանակահատվածում Թումանյանի ստեղծագործությանը տված գնահատականները միանգամայն տարբեր էին, հակասական, առաջ քաշած հարցադրումները՝ վիճելի, որոշ դեպքերում՝ անընդունելի:

Բավական հարուստ է եղել այս շրջափուլում Թումանյանի ծավալած թե՛ ստեղծագործական թե՛ հասարակական գործունեությունը՝ առիթ տալով բազմաթիվ արձագանքների: Լինելով հայ մտավոր կյանքի կենտրոնաձիգ ուժերից մեկը՝ բանաստեղծը հաճախ է դարձել քննադատության թիրախ: Բազմաբղետ կարծիքների ու բանավեճերի արդյունքում բացահայտվել են ոչ միայն Թումանյանի, այլև ժամանակի քննադատական մտքի հիմնական միտումներն ու գեղագիտական չափանիշները:

2.2. «ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԵՐՐՈՐԴ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԻԲՐԵՎ ԺՈՂՈՎՐԴԻ ՍՐՏԻ ԼՈՒՌ ՀԱՌԱՉԱՆՔՆԵՐԻ ՈԳԵՂԵՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Այս ենթագլխում ներկայացվում են Թումանյանի ստեղծագործական մեծ թռիչքի առհավատչյան դարձած «Բանաստեղծություններ» երրորդ ժողովածուի (1903) արձագանքները: Ի տարբերություն նախորդ երկուսի՝ ժողովածուն առանձնանում է ոչ միայն դասական ավանդների յուրացման, ժողովրդայնության, գեղարվեստական վարպետության, էպիկական ոճի կատարելագործման, ժանրային ձևի լիակատար ներդաշնակության հասնելու, այլև բազմաթիվ ու բազմաբնույթ արձագանքների տեսակետից: 304 էջից բաղկացած գիրքը թե՛ բովանդակությամբ, թե՛ արտաքին տեսքով, թե՛ տեխնիկական առումով եզակի երևույթ էր հայ գրականության մեջ:

Ենթագլխում մանրամասն անդրադարձել ենք ժողովածուի գրեթե բոլոր արձագանքներին, արժեբանական դիտարկումներին, որոնց մի

մասը պարզ ապացույցն էր այն բանի, որ ժամանակի գրաքննադատական միտքը դեռևս լիովին չէր ձերբազատվել գաղափարական կարծրատիպերից, հասարակական հոսանքների աշխարհայացքային պարտադրանքից (Լեո, Ս. Մանդինյան): Կան նաև ուշարժան դիտարկումներ, օրինակ՝ Վ. Ահարոնյանը Թումանյանի քնարերգության մեջ հայտնաբերում է այն կարևոր հատկանիշը, որ կազմում է նրա բանաստեղծական աշխարհի զարկերակը. դա հայրենի իրականության բացառիկ զգացողությունն է և գեղարվեստական անօրինակ վերակերտումը: Բանաստեղծությունների երրորդ ժողովածուին արձագանքում է նաև արևմտահայ մամուլը (Հ. Համբարյան, Մ. Պոտուրյան):

Թումանյանի բանաստեղծական աշխարհը ճանաչելու և մեկնաբանելու յուրօրինակ փորձ է արել նաև նրա մտերիմ բարեկամներից Փ. Վարդազարյանը: «Վշտի ու թախծի երգիչ Հովհաննես Թումանյան» փոքրածավալ գրքույկը ուշադրության արժանի է հենց թեկուզ նրանով, որ արտահայտում է բանաստեղծի անձնական կյանքին մոտիկից ծանոթ ոչ մասնագետ ընթերցողի տպավորությունները: Գրքույկը տպագրության պատրաստելու ընթացքում ուշագրավ նամակագրություն է եղել Փ. Վարդազարյանի և Թումանյանի միջև[7]: Նամակներում արծարծված հարցերից երևում է՝ Վարդազարյանը պատրաստ չի եղել խորությամբ ըմբռնելու և վերլուծելու Թումանյանի բանաստեղծական աշխարհը: Նամակների հարցադրումները առիթ են տվել Թումանյանին հայացք գցելու սեփական ստեղծագործություններին, կատարելու ինքնավերլուծություն, մեկնաբանելու իր տողերը:

«Բանաստեղծություններ» երրորդ ժողովածուն հրապարակվելուց հետո Թումանյանը դառնում է արևելահայ բանաստեղծության կենտրոնական դեմքերից մեկը: Չնայած ժամանակի գրաքննադատական հայացքների սահմանափակությանն ու միակողմանիությանը՝ գրախոսականներում մատնանշվեցին Թումանյանի գեղարվեստական աշխարհը բնութագրող որոշ նրբերանգներ, որոնք հետագայում մանրակրկիտ ուսումնասիրության, խոր և հիմնարար վերլուծության առիթ դարձան: Երրորդ ժողովածուի վերաբերյալ հրապարակային արձագանքները յուրօրինակ գնահատականներ էին ոչ միայն Թումանյանի ստեղծագործական աշխարհի, այլև 20-րդ դարի գրական այն միջավայրի, որտեղ ապրում ու ստեղծագործում էր ամենայն հայոց բանաստեղծը:

2.3. ՄԱՆԿԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Այս ենթագլխում ներկայացվում է Հ. Թումանյանի մանկական երկերի գնահատությունը ժամանակի քննադատության կողմից: Պարբերական

[7] Տես Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 9, Երևան, 1997, էջ 438-449:

մամուլում, տարբեր ժողովածուներում տպագրվում են բազմաթիվ գրախոսություններ, հոդվածներ, որոնք առանձին կամ ժամանակի ընդհանուր գրական համապատկերում բացահայտում են Թումանյանի մանկագրությանը բնորոշ մի քանի առանձնահատկություններ ոչ միայն զուտ գրականագիտական, այլև ուսումնադաստիարակչական առումներով: Անշուշտ, եղած կարծիքները տարբերվում էին ինչպես հարցադրումների խորությամբ, այնպես էլ թումանյանական աշխարհը ընկալելու և ներկայացնելու օբյեկտիվ ու սուբյեկտիվ հնարավորություններով: Դա հիմնականում պայմանավորված էր նրանով, թե գրախոսը կամ հոդվածագիրը ինչ առիթով և ինչ համատեքստում է անդրադարձել Հ. Թումանյանի մանկագրությանը, նկատի ունենք գիրք, պարբերական, թե բանաստեղծի առանձին ստեղծագործություն կամ այլ խնդիրներ. անկարևոր չէ նաև, թե ով է հոդվածի կամ գրախոսության հեղինակը: Այս նկատառումով էլ նպատակահարմար ենք գտել հոդվածներին ու գրախոսություններին անդրադառնալ մի քանի թեմատիկ խմբերով՝ նվիրված «Հասկերին», «Լուսաբերին», «Մանկական մատենաշարին», առանձին գործերի և Թումանյանի մանկագրության հետ կապված այլ խնդիրների:

Քանի որ «Սասունցի Դավիթ» և «Թմկաբերդի առումը» պոեմները հասցեագրված էին պատանիներին, ուստի հարմար ենք գտել սրանց վերաբերող գրախոսականներին ու հոդվածներին անդրադառնալ այս ենթագլխում:

Հ. Թումանյանի՝ «Հասկերում» տպագրված մանկական երկերի արժևորումը: 20-րդ դարի հայ մանկական պարբերականների շարքում կարևոր տեղ է գրավել «Հասկեր» պատկերազարդ ամսագիրը, որ լույս է տեսել 1905-1916 թթ. Թիֆլիսում: Հատկանշական է, որ ժամանակի քննադատությունը, մանկական գրականության զարգացման գործում բացառիկ դեր վերապահելով «Հասկերին», կարևորել է հատկապես Թումանյանի աշխատակցությունը: Իսկապես, Հ. Թումանյանը «Հասկերի» տպագրության բոլոր տարիներին մշտապես համարվել է հանդեսի համար բարձր վարկանիշ ապահովող առաջնակարգ ուժը: Եվ դա պատահական չէր: Թումանյանը մանկավարժ-հոգեբանի նրբանկատությամբ մշտապես հաշվի էր առնում մանուկների նախասիրությունները, տարիքային առանձնահատկությունները, ազգային մտածողությունը, գրածները հաճախ ներկայացնում իր երեխաների դատին, ընթերցում նրանց համար, հետո միայն հանձնում տպագրության: Ամսագրի համար ստեղծագործելը նրա համար բավական լուրջ ու կարևոր գործ էր, քանի որ այդ երկերը միտված էին իրականացնելու մանկան դաստիարակության ու կրթության գործը, ինչի առաքելությունն էր որդեգրել «Հասկերը»:

«Լուսաբեր» դասագիրքը քննադատության գնահատմամբ: 1905թ. Ստ. Լիսիցյանի անձնական միջոցներով հրատարակվող

«Հասկեր» մանկական ամսագիրը լայն ճանաչում էր ձեռք բերել շնորհիվ նախկառաջ Հ. Թումանյանի: Երգահան, մանկավարժ Ա. Մանուկյանը իր հուշերում գրում է, որ երբ հրապարակ եկավ Հ. Թումանյանի հմայիչ բանաստեղծություններով հարուստ «Լուսաբերը», մայրենի լեզվի մի շարք դասագրքեր, որ կազմել էին մանկավարժներ Ս. Մանդինյանը, Նիկ. Տեր-Ղևոնդյանը, Ղ. Աղայանը, Տ. Ռաշմաճյանը, Հակ. Աղաբաբը, Աթ. Խնկոյանը և ուրիշներ, հետ մղվեցին:

Հուշագիրը չի չափազանցնում. նա արձանագրում է պատմական իրողությունը: Ինչպես և սպասելի էր, «Լուսաբերը» արժանանում է ժամանակի գրաքննադատների, ուսուցիչների, մամուլի ուշադրությանն ու տարաբնույթ գնահատականների: Դասագրքի մասին բոլոր հոդվածների հանգամանալից քննությունը դուրս է մեր ուսումնասիրության ծրագրից: Անդրադարձել ենք հատկապես այն հոդվածներին, որոնց հեղինակները դասագրքի արտակարգ հաջողության մասին խոսելիս կարևորում են առաջին հերթին Թումանյանի մասնակցությունը և այդ առիթով փորձում արժևորել նրա՝ դասագրքում տպագրված գործերը: Նկատենք՝ «Լուսաբերի» մասին բազմաթիվ հոդվածներում Թումանյանի երկերի գնահատականը տրվում է հակիրճ, դասագրքի ընդհանուր համապատկերում: Սակայն նկատի ունենալով XX դարասկզբի գրաքննադատական մտքի ավելի հանգամանալից ու հիմնավորված արժևորումները՝ վստահաբար կարելի է ասել՝ դաստիարակչական, ճանաչողական, ազգային մտածողության և գեղագիտական ճաշակի ձևավորման, մայրենի լեզվի ուսուցման, բառապաշարի հարստացման տեսակետից «Լուսաբերը» առանձնանում է շնորհիվ նախկառաջ Հ. Թումանյանի ստեղծագործությունների:

Հ. Թումանյանի մանկական գործերի արժևորումը «Մանկական գրադարան» մատենաշարի շրջանակում: Հ. Թումանյանի մանկագրության մասին խոսելիս հատուկ պետք է անդրադառնալ «Մանկական գրադարան» մատենաշարին: 1908 թ. նոյեմբերից իշխանուհի Մ. Թումանյանի նախաձեռնությամբ առանձին գրքույկներով, գեղեցիկ նկարազարդումներով թողարկվում են Թումանյանի մանկական ստեղծագործությունները: Նախաձեռնությունը և բարձր ընդունելությունը վկայում են՝ բանաստեղծի մանկական երկերը սիրված ու սպասված էին և բացառիկ տեղ ունեին մանկական գրականության մեջ: Բոլոր գրքույկներն անխտիր արժանանում են քննադատության, մանկավարժների և առհասարակ շահագրգիռ մտավորականության ուշադրությանը: Այդ արձագանքների մի մասը աչքի է ընկնում մասնագիտական բանիմաց վերլուծություններով, մյուսը՝ ավելի մասնավոր կարգի, մակերեսային բնութագրումներով: Ուշադրության արժանի են Ավ. Իսահակյանի, Պ. Մակինցյանի, Ց. Խանզադյանի, Ն. Աղբալյանի և այլոց գրախոսականները՝ նվիրված մատենաշարի հրատարակություններին:

«Սասունցի Դավիթ» պոեմը քննադատության թիրախ: Հ. Թումանյանի մանկագրության զարդերից մեկը համարվող «Սասունցի Դավիթ» պոեմը մշտապես եղել է գրաքննադատության ուշադրության առանցքում՝ արժանանալով թե՛ մեծագույն հիացմունքի և բարձր գնահատության, թե՛ սուր, հաճախ անհիմն քննադատության: Իբրև թիրախ առավելապես եղել է բանահյուսական նախօրինակի գրական մշակման խնդիրը. պոեմը հիմնականում համարվել է բնօրինակի սոսկ «ազատ թարգմանություն», հեղինակային ինքնուրույնությունից զուրկ գործ: Առաջին հայացքից թվում է՝ իսկապես պահպանված է ժողովրդական նյութի արտաքին ձևը, մանավանդ, եթե հավելենք Թումանյանի խոստովանությունը, թե ինքը ոչինչ չի հորինել, բոլոր դրվագներն ու կերպարները վերցրել է ժողովրդական աղբյուրից: Խնդրի լուծումը դարձյալ տալիս է բանաստեղծն ինքը. «Եվ շնորհքը հենց էդ պատմելու մեջն է, որ իմանան՝ ինչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը պահեն, ինչ լեզվով, ինչ ոճով և ինչպես պատմեն, որ և՛ գեղեցիկ դուրս գա, և՛ ժողովրդականի համն ու հոտը չկորցնի»[8]: Հենց այս՝ միայն իրեն հատուկ թումանյանական սկզբունքով էլ բանաստեղծը էպոսի մի քանի պատումներից ընտրում է հիմնական հասցեատիրոջ՝ երեխայի իմացականությանն ու ըմբռնողությանը հարիր դրվագներ և գրում եզակի մի գործ, որ մինչ օրս ընդունված և սիրված է ժողովրդի մեջ:

«Սասունցի Դավիթը» առաջին անգամ տպագրվում է 1903 թ. «Մուրճի» 2-5 համարներում: Պոեմն ունենում է ևս 7 տպագրություն՝ կառուցվածքային և ոճական որոշակի փոփոխություններով: Մեր նպատակից դուրս է էպոսի մշակման թումանյանական սկզբունքների քննությունը: Մենք դիտարկել ենք բանաստեղծի կենդանության օրոք պոեմին տրված գնահատումների օբյեկտիվ ու սուբյեկտիվ հիմքերը: Գրախոսությունների մի մասը առավելապես նկարագրական բնույթի է, ինչպես դա նկատելի էր բանաստեղծությունների երրորդ ժողովածուի որոշ արձագանքներում: Հեղինակները ձեռնպահ են մնում պոեմը ըստ էության արժևորելուց, առանց որևէ մեկնաբանության պարզապես վերաշարադրում են գործողությունների հաջորդական ընթացքը, որ մեծ մասամբ նույնական են դիտում բանահյուսական բնօրինակի հետ: Բայց այդ կարգի գրախոսություններում էլ հազվադեպ չեն արժեքավոր դիտարկումները: Հիշենք, օրինակ, Ավ. Ահարոնյանի մեկնաբանությունները պոեմի մասին:

Չնայած ժամանակի քննադատության՝ «Սասունցի Դավիթ» պոեմի մասին տարբեր, երբեմն իրարամերժ, հաճախ միակողմանի գնահատություններին, անհիմն դիտարկումներին, այնուամենայնիվ գրախոսականներում մատնանշվում են Թումանյանի գեղարվեստական աշխարհը բնութագրող որոշ նրբերանգներ, որոնք հետագայում խոր և հիմնարար վերլուծությունների առիթ են դառնում:

[8] Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, Երևան, 1994, էջ 161:

«Թմկաբերդի առումը» պոեմի արժևորումը: Պոեմը հատուկ հասցեագրված չէ տարիքային որևէ խմբի. այն հասկանալի է թե՛ պատանիներին, թե՛ մեծահասակներին: Պատահական չէ, որ երբ 1909 թ. պոեմը լույս է տեսնում առանձին գրքույկով, մանկավարժ Մամբրե Մատենճյանը տպագրում է մի գրախոսական, որի սկզբում կա այսպիսի դիտարկում. «Մեր դպրոցներում արդեն սկսել են մեծ հաճույքով կարդալ հեղինակի այդ գրվածքը ևս, որի մասին ուսուցիչներից ոմանք խոսում են հիացքով. իսկ բարեկամներիցս մեկը պատմեց, որ գուցե ինքը թարգմանե ռուսերեն: Մյուս կողմից, սակայն, մինչև հիմա ոչ մի լուրջ գրախոսական չնվիրվեց տասնչորս երեսից բաղկացած այդ չափածո վեպիկին, որ դպրոցներում կարող է և պետք է տեղիք տա բեղմնավոր վեճերի և շարադրությանց. ուստի արժե այստեղ քննել այդ պոեման...»[9]:

Այս ենթագլխում ներկայացվում են Մատենճյանի, Լ. Մանվելյանի, Պ. Մակինցյանի, Ա. Տերտերյանի երբեմն ուշարժան, երբեմն էլ վիճահարույց դիտարկումները պոեմի վերաբերյալ: Մտորելու տեղիք են տալիս Պ. Մակինցյանի մեկնաբանությունները, որոնք անմիջապես մատնում են մարքսիստ քննադատի՝ ժամանակի նորաձև սոցիոլոգիական մեկնակետը: Ըստ Մակինցյանի՝ քայքայվող գյուղաշխարհում չտեսնելով ապագայի համար մարտնչող ուժեր՝ Թումանյանը կարոտով հետադարձ հայացք է նետում դեպի անցյալը, այնտեղ որոնում ու գտնում իր ուզած հերոսներին: Նրան անհասկանալի են թվում Ջավախքի տիրուհու քայլերն ու խոսքերը և այլն: Պոեմին ու Թմկա տիրուհու քայլերին բոլորովին այլ տեսանկյունից է մոտենում Ա. Տերտերյանը: Հայրենի եզերքի բանաստեղծը, ըստ նրա, սիրո մեջ տեսնում է հավերժորեն գոյություն ունեցող և անմեռ մի բան. սերը չի կարող դավաճանել, նա կարող է սայթաքել կամ մոլորվել, բայց ի վերջո հաղթելու է, ինչն էլ նրան դարձնում է անմահ:

Հ. Թումանյանի մանկագրության այլ գնահատումներ: Հ. Թումանյանի մանկական ստեղծագործությունների մասին կարծիքներ արտահայտվել են ամենատարբեր առիթներով, ամենատարբեր խորությամբ ու ձևաչափով: Նրա մանկագրությանը նվիրված ամբողջական ուսումնասիրություն այդպես էլ չի ստեղծվել ո՛չ նրա կենդանության ժամանակ, ո՛չ էլ հետագայում: Թե՛ ժամանակակիցները, թե՛ թումանյանագիտության հետագա երախտավորները իրենց այլ հետաքրքրությունների շրջանակներում մեծ կամ փոքր չափով անդրադարձել են Թումանյան մանկագրին, սակայն այդպես էլ լիովին չի բացահայտվել նրա մանկական ստեղծագործությունների իրական արժեքը: Այնուամենայնիվ ժամանակակիցները նկատել ու ընդգծել են նրա մանկական երկերի հզոր ազդեցությունը երեխաների հուզաշխարհի վրա: Կարևոր դիտարկումներ հանդիպում են նաև այլ խնդիրների նվիրված զանազան հոդվածներում և ուսումնասիրություններում: Օրինակ՝

[9] «Նոր դպրոց» հմ. 5, Թիֆլիս, 1910, էջ 80:

պատմասոցիոլոգիական ուղղության հետևորդ Հ. Սոլովյանը Թումանյանի մանկական գործերը քննում է օգտակարության տեսանկյունից. լեգենդներում, օրինակ, ամենից առաջ որոնում է խրոխտ, դյուցազնական գործ, կյանքի առաջընթաց, ժամանակի շունչ:

Ուշագրավ է, որ երբեմն Հ. Թումանյանի մանկագրությանը քննադատներն անդրադառնում են այլ առիթներով, այս կամ այն հեղինակի մասին խոսելիս և իբրև համեմատության եզր նշում են Թումանյանի անունը: Օրինակ՝ Մ. Ավետիսյանը Աթ. Խնկոյանի «Գյուղացին և Արջը» և «Աղվեսն ու Արջը» հեքիաթները գրախոսելիս առաջինն ընդգծում է այն փաստը, որ Խնկոյանը, հետևելով Թումանյանին, մշակում է ժողովրդական հեքիաթներ ու ավանդություններ: Սակայն ավելացնում է, որ ոչ բոլորին է իրապես հաջողվում ստեղծել գրական այնպիսի մշակումներ, որ, մաքուր գրական լեզվով լինելով հանդերձ, պահպանեին «ժողովրդական ընտիր ոճերն ու դարձվածքները»[10]: Այդ բացառիկներից միակը, ըստ Մարգարի, Թումանյանն է, որ կարողացել է իր բանաստեղծական տաղանդը «փայլեցնել» այդ բնագավառում ևս:

Նմանատիպ կարծիք է հայտնում նաև Ն. Աղբալյանը Ա. Խնկոյանի «Ծիտն ու որբերը» հեքիաթին, Ատրպետի «Լծկաններն և Վամպիրը» առակին նվիրված գրախոսականներում: Քննադատը կարևորում է այն ազդեցությունը, որ պիտի թողնի երկը երեխայի դաստիարակության վրա. Ատրպետի առակը այդ իմաստով ոչ միայն ոչինչ չի տալիս, այլև «սխալ ըմբռնումներ», հակադաստիարակչական երանգներ է պարունակում: Դարձյալ հիշատակվում է Թումանյանի անունը. «Չգիտենք ինչո՞ւ արձակագիր Ատրպետը մանուկների հետ կամեցել է չափածո խոսել: Վարակո՞ւմ. տաղանդավոր Հովի. Թումանյանը այդպես է գրում իր առակները...»[11]:

Հ. Թումանյանի խաղերը ժամանակի հոլովույթում: Թումանյանի անվան հետ են կապվում նաև հայրենագիտական խաղերը, որոնք նա ստեղծել է իր երեխաների հետ 1915 թ.՝ հայ ժողովրդի համար ծանրագույն օրերին: Թումանյանը հրաշալի գիտեր, որ հատկապես այդ ժամանակաշրջանում առաջնային պետք է լինի ապագա սերնդի ազգային-հայրենասիրական դաստիարակության հարցը, ինչի լուծման ամենաարդյունավետ ճանապարհը խաղն է:

Թումանյանի հայրենագիտական խաղերը գրավում են ոչ միայն երեխաների, այլև մամուլի ուշադրությունը: Տպագրվում են տարբեր գրախոսականներ, որտեղ հոդվածագիրները բարձր են գնահատում «Մանուկ» ընկերության ձեռնարկումը և կարևորում «խելացի» խաղերի «մուտքը» հայ ընտանիքներ: Ընդգծվում է խաղերի ներգործուն ուժը. երեխայի առօրյան պետք է լցնել օգտակար և հետաքրքիր բաներով՝

[10] «Հորիզոն», հմ. 121, Թիֆլիս, 1910:
[11] «Հորիզոն», հմ. 219, 1912:

կտրելով նրան փողոցից և իմաստավորելով ժամանակը: Խաչենցի ստորագրությամբ հեղինակը բավական հիմնավոր դիտարկումներ է կատարում՝ ընդգծելով խաղերի համադրական ու համակարգված բնույթը: Ըստ գրախոսի՝ շարքն «իր մեջ գեղեցիկ կերպով համախմբել է մանկավարժական մի շարք առողջ տարրեր, որոնցից զատ ունի և դաստիարակչական, կրթական, գրական, բարոյական ու հայրենագիտական նշանակություն»[12]: Ընդհանուր բնութագրին հետևում է խաղերի կիրարկման գործառութային վերլուծությունը: Ժամանակակիցները բարձր են գնահատում Թումանյանի խաղերը՝ դրանք դիտելով իբրև երեխաների կրթության, հայրենիքը ճանաչելու, հաճելին օգտակարի հետ համատեղելու հրաշալի միջոցներ:

2.4. Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԲԱՆԱՎԵՃԵՐԸ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Սույն ենթագլխում ներկայացվել է ժողովրդական բանահյուսության հետ Հ. Թումանյանի ստեղծագործական բազմաբնույթ աղերսներին վերաբերող բանավիճային կարևոր հրապարակումների համառոտ տեսությունը, որ ժամանակին մտքեր է հուզել և հիմք դարձել ցայսօր հետաքրքրությունը չկորցրած բացահայտումների: Բազմաբնույթ, երբեմն իրարամերժ կարծիքները առիթ են տվել բանաստեղծին զարգացնելու հարցին վերաբերող մի ամբողջական ուսմունք, որ հնարավորություն է տալիս ճիշտ կողմնորոշվելու նրա գրաքննադատական հայացքների, բուն գեղարվեստական մտածողության, ստեղծագործական հոգեբանության խնդիրների մասին խոսելիս:

Նկատել ենք՝ հաճախ որևէ գրողի արժանիքները գնահատելու համար որոշ քննադատներ իբրև համեմատության եզր մատնանշում էին Թումանյանին: Սակայն ժողովրդական թեմաներ մշակելու թումանյանական տաղանդը երբեմն ներկայացվել է բոլորովին այլ մեկնաբանությամբ: Այս առիթով բանաստեղծին ուղղված քննադատությունը երբեմն դուրս էր գալիս այս կամ այն առանձին ստեղծագործության շրջանակներից՝ շոշափելով գիտակարգային կարևորագույն խնդիրներ: Այսպես, 1909 թ. հուլիսի 28-ին «Մշակում» տպագրվում է Ռ. Դրամբյանի ««Գրական մեծությունները» բանագող» հոդվածը, որտեղ «Լուսաբերում» տպագրված որոշ հեքիաթներ համարվում են «նույնությամբ գողացված» Հայկունու գրքից: Բացահայտ ակնարկվում է, թե «Հասկերն» ու «Լուսաբերը» դարձել են գրական այն շրջանակը, ուր «հեղինակություն ու դիրք ձեռք բերելու տենչով տարված գրագետները», փառքի են հասնում ու գումարներ վաստակում Ս. Հայկունու հաշվին:

[12] «Հորիզոն», հմ. 17, Թիֆլիս, 1916:

«Ոչ գրական ոչնչությունները քննադատ» պատասխան հոդվածը, ինչպես բազմիցս հավաստել է գրականագիտությունը, ժողովրդական բանահյուսության և գեղարվեստական գրականության հարաբերության մասին բանաստեղծի հայացքների համակողմանի համակարգված տեսությունն է, որ չի հնացել նաև այսօր: Նշենք, որ այդ տեսությունն ուներ նաև այն ժամանակվա համար հրատապ գործնական նշանակություն: Մեծացել էր հետաքրքրությունը ժողովրդական բանահյուսության նկատմամբ, հաճախակի էին դարձել բանահյուսական թեմաների գրական մշակման փորձերը: Հ. Թումանյանի հոդվածը ուղեցույց կարող էր լինել այդ փորձերի համար: Ծավալվում է սուր բանավեճ, որին արձագանքում են նաև ժամանակի այլ մտավորականներ:

Դրամբյանիզմ երևույթը մշտապես աննկատելիորեն ուղեկցում էր գրական-մշակութային կյանքին. բանավեճից տարիներ անց՝ 1913 թվին, «Հովիտի» հմ. 16-ում տպագրվում է Ս. Համալյանի «Հովի. Թումանյանի «Գառնիկ ախպերը»» հոդվածը: Հեղինակը մեղադրում է Թումանյանին ռուսական «Сестрица Аленушка и братец Иванушка» հեքիաթի թարգմանությունը իբրև ինքնուրույն գործ ներկայացնելու մեջ: Հեռվից հեռու ձայնակցելով տխրահռչակ Դրամբյանին՝ Ս. Հ.-ը բանագողության մեջ է մեղադրում բանաստեղծին:

Թումանյանի պատասխան հոդվածը դիմազերծ է անում Ս. Հ-ին՝ ցույց տալով, որ նա համարձակվել է մտնել մի ասպարեզ, որի մասին դրսևորում է կատարյալ անտեղյակություն: Բանավեճը նոր թափով շարունակվում է, և բանաստեղծը ստիպված է լինում հակահարված տալ դրամբյանիզմի հերթական հարձակմանը: Տպագրվում է «Հայոց դրամբյանիզմն ու ես» մեծածավալ հոդվածը, որ հայ քննադատության պատմության մեջ պիտի մնար որպես դասական էջերից մեկը: Ծավալուն հոդվածի վերջում, նկատի ունենալով հայ գրական կյանքի անցյալն ու ներկան, բանաստեղծը ցավով եզրակացնում է, որ հայ իրականության մեջ նոր չեն «գրական անճաշակությունն ու տգիտությունը միացած փոքրիկ հոգու չարությանը», այլ խոսքով՝ դրամբյանիզմը:

Թումանյանը, սակայն, հույսեր է կապում հիմնավոր կրթություն ստացած, բազմակողմանի զարգացած քննադատների նոր սերնդի հետ, որ պիտի իրականացնի իսկական քննադատի իր իդեալը: Քննադատների այդ սերնդից էր Ց. Խանզադյանը, որ 1913 թ. «Բաքվի ձայնի» հմ. 103-ում իր ազնիվ զայրույթն է արտահայտում՝ խոսքն ուղղելով ժամանակի վայ հրապարակախոս-քննադատներին, այն «հերոստրատներին», որոնք փորձում են պատմության թատերաբեմում ստանձնել կարևոր դեր՝ ի հաշիվ տաղանդների:

Թումանյանին համարելով հայ գրականության գագաթը, որի ստեղծագործությունը պատիվ կարող էր բերել մշակութային ցանկացած մեծ ազգի գրականության՝ Խանզադյանն արձանագրում է՝ հայ

«քննադատ» կոչվածները չեն զգում, որ այն «զվարճախոս, պարզ ու պարզամիտ մարդը այնպիսի մեծություն է, որ կարող էր մի ժողովուրդ պարզերես անել պատմության առաջ»[13]:

ԳԼՈՒԽ 3.
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1910-ԱԿԱՆ ԹԹ. ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Երրորդ գլուխը բաղկացած է վեց ենթագլխից. ներկայացնում է 1910-ական թթ. գրական-քննադատական մտքի աշխարհայեցության նոր ու բազմակողմանի դրսևորումները, գեղարվեստական գրականությունը գնահատելու չափորոշիչները, մեթոդական սկզբունքները, աշխարհայացքային տարբերությունները, որոնց հիմնապատկերի վրա ամրագրվում են ժամանակի քննադատության արձագանքները Հ. Թումանյանի՝ ստեղծագործական երրորդ շրջանում (1910-1919) տպագրված ստեղծագործությունների վերաբերյալ:

3.1. 1910-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՈՒՐՎԱԳԾԵՐ

Այս ենթագլխում տրվում է 1910-ական թվականների գրաքննադատական մտքի նոր ու բազմակողմանի խմորումների, գրական-պատմական երևույթները մեկնաբանելու, եվրոպական կրթություն ստացած քննադատների նոր մոտեցումների ընդհանուր նկարագիրը: Ամփոփ վերլուծությամբ ներկայացրել ենք քննադատական մտքի բազմատարր շարժընթացը և այդ համապատկերում Թումանյանի արվեստի գնահատման՝ ուշադրության և քննության արժանի չափանիշները, ընկալման հիմնական միտումները՝ տեղ-տեղ մեր օրերի գեղարվեստական գիտակցության դիտակետից իմաստավորելով բարձրացված որոշ խնդիրներ:

1910-ական թվականների քննադատական մտքի գեղագիտական կողմնորոշումների խայտաբղետ խճանկարում հայ քննադատները (մասնակի բացառություններով) առավել հստակ շեշտադրումներով և համակողմանիորեն են ներկայացնում Թումանյանի ստեղծագործությունները, ընդգծում դրանց հասարակական, գեղագիտական, դաստիարակչական արժեքը: Իհարկե, սա չի նշանակում, թե նախորդ երկու տասնամյակում հնչած կարծիքները զուրկ էին գիտական և մնայուն արժևորումներից (հիշենք, օրինակ՝ դեռևս առաջին ժողովածուի մասին Մ. Աբեղյանը մատնանշած այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ժողովրդայնությունն ու էպիկականությունը): Սակայն ինչո՞վ

[13] «Բաքվի ձայն», հմ. 103, Բաքու, 1913:

է պայմանավորված այս բեկումնային շրջադարձը: Էդ. Ջրբաշյանը հարցը մեկնաբանում է գեղարվեստական գիտակցության նոր մակարդակի հանգամանքով, որին հայ գրականությունը հասավ 1910-ական թթ.: «Այդ շրջանում ստեղծվեցին իսկական դասական կատարելությամբ, կենսական և հոգեբանական խոր բովանդակությամբ օժտված բազմաթիվ արձակ, դրամատիկական և մանավանդ բանաստեղծական երկեր: Ձևավորվեց ժամանակակից գեղարվեստական մտածողությամբ տոգորված ճաշակների և ըմբռնումների հասարակական մթնոլորտ, որն իր հերթին հիմք ծառայեց իսկական գեղագիտական արժեքների գնահատման համար: Դա առաջին հերթին արտահայտվեց ազգային գեղարվեստական իդեալների լավագույն կրող Թումանյանի դերի և նշանակության նոր, շատ ավելի խոր ըմբռնման մեջ: Այստեղ կարևոր դեր խաղաց նաև այն, որ հենց նույն շրջանում հրապարակ իջավ գեղագիտական լուրջ դաստիարակություն ստացած քննադատների մի բավական ստվար խումբ»[14]:

3.2. Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ «ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՃԱՇԱԿ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՈՒՆԵՑՈՂ ՔՆՆԱԴԱՏՆԵՐԸ

Այս ենթագլխում ներկայացվում են 1910-ական թթ. քննադատության արձագանքները: Եթե դարասկզբի առաջին տասնամյակում քննադատությունը Թումանյանին անդրադառնում էր առանձին հոդվածների, գրախոսությունների, փոքրիկ ակնարկների միջոցով, ապա 1910-ական թվականներին սկսում են տպագրվել այլ բնույթի ու ձևաչափի նյութեր: Սկսած 1910 թվականից՝ լույս են տեսնում հայ գրականության պատմությանը նվիրված մենագրություններ (Վ. Փափազյան, «Պատմություն հայոց գրականության. սկզբից մինչև մեր օրերը», 1910, Լ. Մանվելյան, «Ռուսահայ գրականության պատմություն» (Դ հատոր), 1910, Հ. Սոլովյան, «Քննադատական տեսություններ. ժամանակակից հայ քնարերգության փիլիսոփայությունը», հտ. Ա., 1911, Հ. Սիմեոն Երեմյան, Ազգային դեմքեր. գրագետ հայեր, ութերորդ շարք, 1914), հոդվածներ (Գր. Բալասանյանի «Ռուսահայոց նորագույն բանաստեղծները. Հովհաննես Թումանյան», Պ. Մակինցյանի «Դիմագծեր», Դ. Անանունի «Անցյալի մեծարանքը» (Հովհաննես Թումանյանի քնարը) և այլն), որոնցում ուսումնասիրվող հեղինակների շարքում իր տեղն ուներ Թումանյանը: Գեղագիտական տարբեր չափանիշներով ու խորությամբ էին մոտենում բանաստեղծին, սակայն կարևորն այն է, որ յուրաքանչյուրը, իր տեսանկյունից փորձելով բացահայտել թումանյանական աշխարհի առանձնահատկությունները, ի վերջո նկատում էր ուշադրության արժանի ինչ-որ նրբերանգ:

Բանաստեղծն ինքը հույսեր էր կապում քննադատների նոր սերնդի հետ, ու թեպետ այդպես էլ չի տեսնում իր բանաստեղծական աշխարհն

[14] Ջրբաշյան Էդ., Չորս գագաթ, Երևան, 1982, էջ 92-93:

ըստ էության հայտնաբերող քննադատին, այնուամենայնիվ, չի թաքցնում հիացմունքը, որ տածում է 1910-ական թվականների գրական արենայում հայտնված քննադատների նկատմամբ:

3.3. ԱՐՍԵՆ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ «ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔԻ ՔՆԱՐԵՐԳՈՒՆ»

«Հովհաննես Թումանյան. հայրենի եզերքի քնարերգուն» աշխատությունը այսօրվա չափանիշներով էլ թումանյանագիտության առանցքային էջերից է: Ի տարբերություն նախորդ քննադատների հայեցակետերի և մեթոդական մոտեցումների միակողմանիության՝ Տերտերյանը դնում է բանաստեղծի ստեղծագործության համակողմանի վերլուծության ու գնահատման գիտական սկզբունքների հիմքը: Շրջանցելով քննադատության ավանդական եղանակները՝ նա առաջադրում է գեղարվեստական երկի վերլուծության գեղագիտական-հոգեբանական մեթոդը: Պետերբուրգի նյարդահոգեբանական ինստիտուտում յուրացնելով քննադատության նոր սկզբունքներն ու չափանիշները՝ Տերտերյանը հայ գրականագիտության մեջ հանդես է գալիս իբրև հոգեբանական դպրոցի կարկառուն ներկայացուցիչ և հենց այդ դպրոցի մեթոդաբանական և գաղափարական սկզբունքներով էլ գնահատում է Թումանյանին: Թեև Ա. Տերտերյանը Թումանյանի ստեղծագործական աշխարհը քննելիս մշտապես պահպանում էր հիմնարար այն դրույթը, թե Թումանյանի տաղանդը դրսևորվում է հայրենի եզերքին առնչվող երկերում, այնուամենայնիվ նա իր նուրբ վերլուծություններով հիմք է դնում հերոսների հոգեբանական ապրումների քննության կարևորմանը, ինչը իր ժամանակի համար նոր խոսք ու մոտեցում էր:

3.4. «ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Այս ենթագլխում ներկայացվում են 1916 թ. սկզբին հրատարակված «Հայրենիքիս հետ» ժողովածուի արձագանքները: Գրքույկում ամփոփված ստեղծագործությունները ո՛չ ժամանակագրական, ո՛չ էլ այլ կարգի որևէ հետևողականություն չեն ներկայացնում: Միայն որոշակիորեն նկատելի է բանաստեղծությունների ընտրության նպատակային բնույթը. դրանք ներկայացնում են ժողովրդի անցած հազարամյակների ճանապարհը՝ անկումներով ու վերելքներով, բայց միշտ առանց փակուղային բեկվածքների, ներկայացնում են նաև բանաստեղծի հոգու պատմությունը, որ անբաժան է ժողովրդի հավաքական հոգու պատմությունից:

Տպագրված գրախոսությունների ուսումնասիրությունը բացահայտում է ոչ միայն ժողովածուի ընդհանուր արժևորումը, այլև ժամանակի քննադատական մտքի՝ գրական ընթացքն ու գրական տիպաբանության խնդիրները գիտականորեն ձևակերպելու կարողությունը: Գրախոսների (Սանատրուկ, Պ. Մակինցյան, Ա. Կարինյան և այլք) դիտարկումները

հեղհեղուկ էին, չհամակարգված, երբեմն հակասական: Պատկերը որոշակիորեն փոխվում է ավելի ուշ: 1919 թ. տպագրվում է Ե. Տեր-Մարտիրոսյանի, Վ. Խորենու մեծածավալ հոդվածները, որտեղ բարձր են գնահատվում գրքույկը և նրանում ընդգրկված գործերը: Օրինակ՝ Թումանյանի բազմալար քնարի երկրորդ գլխավոր լարը համարելով հայրենասիրականը՝ Խորենին բնական է համարում, որ Թումանյանի նման բանաստեղծը չի կարող անտարբեր ու անկարեկից լինել իր ժողովրդի ցավի ու տառապանքի հանդեպ. «Դրանց մեջ դուք կգտնեք ոչ միայն սովորական բանաստեղծական քնարական հայրենասիրություն, այլև իսկական ժողովրդական-քաղաքական ապրումներ ու իդեալներ, իսկական հեղափոխական երգեր, որպես «Հին կռիվը» և «Վերջին օրը»»[15]:

«Հայրենիքիս հետ» ժողովածուի մասին արձագանքները այսքանով չեն սպառվում: 1921 թ. Փարիզում հրատարակվող «Օշական» ամսագրում տպագրվում է գրքին նվիրված մի գրախոսական՝ Անտոն-Կազէլ ստորագրությամբ: Հեղինակը, ի տարբերություն թիֆլիսյան քննադատների, գիրքը նախևառաջ արժևորում է ոչ միայն իբրև ժամանակի աղետալի օրերի, այլև բանաստեղծի հոգեվիճակի, հուզական ապրումների անկեղծ արձագանք՝ «զուրկ բռնազբոսիկ ու պատիր ձևերեն»: Անծանոթ հեղինակի այս գրախոսականը կարելի է համարել «Հայրենիքիս հետ» ժողովածուի գնահատման արժեքավոր արտահայտություն, որ ընդամենը երկու էջում բացում է գրքի արժանավորությունները:

Չնայած ժամանակի գրաքննադատության՝ ժողովածուի վերաբերյալ տարբեր, երբեմն հակասական ու միակողմանի գնահատություններին, այնուամենայնիվ գրախոսականներում մատնանշվում են Թումանյանի գեղարվեստական աշխարհը բնութագրող հազվագյուտ նրբերանգներ:

3.5. Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՌՈՒՍ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Այս ենթագլխում ներկայացվում են Թումանյան-ռուս գրականություն մշակութային առնչությունները՝ իբրև գրապատմական կարևոր իրողություն՝ փաստն իմաստավորելով աշխատանքի հետազոտական նպատակի ու խնդիրների մասնավոր դիտակետից:

Ռուս իրականության մեջ Թումանյանի երկերի քննության առաջին փորձն արել է Յու. Վեսելովսկին: 1901 թ. Մոսկվայի «Русская мысль» հանդեսի հմ. 12-ում Վեսելովսկին տպագրում է «Армянская поэзия XIX века и ее происхождение» ստվարածավալ հոդվածը, որտեղ անդրադառնում է նաև Թումանյանի գործերին, ընդգծում բանաստեղծի ժողովրդայնությունը՝ արժևորելով հատկապես ժողովրդական կյանքին առնչվող ստեղծագործությունները: Վեսելովսկու անդրադարձը,

[15] «Աշխատաւոր», հմ. 77, Թիֆլիս, 1919:

վերապահումներով հանդերձ, առաջին անգամ ներկայացնում է Հովի. Թումանյանի ստեղծագործական աշխարհը ուրվագծող նրբերագներ, որոնք հետագայում դառնում են նրա բանաստեղծական մտահայեցության առանձնահատկությունը պայմանավորող հատկանիշներ:

Բոլորովին այլ համատեքստում ենք տեսնում ռուս անվանի մտավորական, գրող, թարգմանիչ Վ. Բրյուսովի գնահատությունը, որը խարսխվում է Հ. Թումանյանի հետ ունեցած անձնական մտերմության վրա՝ իր մեջ կրելով հայ-ռուս ազգային մշակույթների խորքային մերձավորության խորհուրդը: Հայ պոեզիայի մասին Բրյուսովի դասախոսությունները, «Հայաստանի պոեզիան» ժողովածուն աննախադեպ երևույթ էին ժամանակի հայ մշակութային կյանքում: Դասախոսության ժամանակ Բրյուսովը նկատում է Թումանյանի բացառիկությունը և ստեղծագործական նկարագրի վերաբերյալ անում պատկերավոր դիտարկումներ, որոնք հեռուն գնացող խորքային կռահումներ են պարունակում: Օրինակ՝ այն, թե Թումանյանի՝ արտաքուստ որևէ համակարգի չենթարկվող բանաստեղծական տաղանդը գարնանային ջրերի պես հոսում է՝ «հպատակվելով միայն գեղարվեստագետի քմահաճ ներշնչմանը»[16]: Խոսքն այստեղ ըստ էության վերաբերում է հայ բանաստեղծի ստեղծագործական մեթոդին, որի շուրջ տարակարծությունները այսօր էլ դեռ շարունակվում են: Բրյուսովը համաձայն չէ այն կարծիքին, թե Թումանյանի պոեզիան գեղագիտական թրծման ճանապարհ չի անցնում: Իբրև օրինակ՝ հիշում է բանաստեղծի պոեմները, որոնցում նրա տաղանդը դրսևորվում է բացառիկ ուժով և արվեստի կատարելությամբ՝ բացահայտելով ժողովրդի ազգային նկարագրի, կենսահայեցության ու հոգեբանության խորքային շերտեր ու ներբերանգներ: Ամփոփելով միտքը՝ Բրյուսովը շարունակում է. «Ամբողջությամբ վերցրած՝ Թումանյանի պոեզիան ինքը Հայաստանն է՝ հին ու նոր, որը հարություն է առնում և տպավորվում բանաստեղծությունների մեջ մեծ վարպետի ձեռքով...»[17]:

Ուշագրավ են նաև Ս. Գորոդեցկի - Հ. Թումանյան առնչությունները: «Իմաստուն և նուրբ» հոդվածում ռուս մտավորականի՝ Թումանյանին գնահատելու նոր փորձը գրեթե նույնանում է բրյուսովյան բնութագրի հետ: Թումանյանի ստեղծագործությունը և անձը դիտարկելով իբրև ներդաշնակ ամբողջություն՝ Գորոդեցկին նկատում է՝ հասկանալ Հովի. Թումանյանին նշանակում է հասկանալ Հայաստանը: Գորոդեցկին բանիմաց դիտարկումներով բացում է Թումանյանի մարդկային հազվագյուտ ներաշխարհի ու ստեղծագործության շատ նրբերանգներ:

Ռուս մտավորականների բացառիկ գնահատականները այսօր էլ մնում են Հ. Թումանյանի ստեղծագործական աշխարհի արժևորման եզակի

[16] Поэзия Армении с древнейших времен до наших дней, Москва, 1916, с.78:
[17] Նույն տեղում, էջ 79:

դրսևորումներ՝ իրենց մեջ ամփոփելով նաև ռուս մտավորականի մտքի խորությունն ու այլ մշակույթի ներքին շերտեր տեսնելու կարողությունը:

3.6. Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ 50-ԱՄՅԱԿԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

Սույն ենթագլուխը հանգամանորեն անդրադառնում է 1919 թ. Թումանյանի ծննդյան 50-ամյակի առիթով տպագրված հոբելյանական հրապարակումներին, որոնք, տարաբնույթ լինելով հանդերձ, ունեն ակնհայտ ընդհանրություններ: Առաջին՝ դրանց հիմնական մասը գրված է մարդկային ջերմ սիրով, անկեղծ պոռթկումներով ու խոստովանություններով, գնահատման անխախտ համոզմունքով, ժամանակի փորձությունն անցած տեսակետներով: Երկրորդ՝ հրապարակումներն ունեն բովանդակային նուրբ աղերսներ, որոնք թույլ են տալիս դրանք բաժանել երեք խմբի՝ ա) գնահատանքի ու մեծարման արտահայտություններ, բ) Թումանյանի բանաստեղծական աշխարհի վերլուծության, քննության նոր փորձեր, գ) չափածո ձոներգեր և ուղերձներ:

Թումանյանի հանդեպ համընդհանուր սերը պայմանավորված էր ոչ միայն նրանով, որ ամեն մի հայ մանուկ հասակից սիրո ու բարության սնունդ էր ստանում նրա ակունքներից, որ հետո, հոգեկան պտուղներ տալով, վերադարձվում էր բանաստեղծին, այլև նրանով, որ սերն ու բարությունը, անկոտրում լավատեսությունը, զվարճասեր ու կենսահաղորդ ոգին Թումանյանի համար առօրյա կենցաղ էին, որոնց ամեն օր հաղորդակցվում էին նրա հետ շփվողները: Մեծ բանաստեղծը իր ժամանակակիցների կողմից սիրվում ու գնահատվում էր ամենից առաջ իբրև մարդու կատարելատիպ, այն մեծատառով Մարդու, որ նաև հենց իր՝ բանաստեղծի իդեալն էր:

Հոբելյանական ուղերձներում և հրապարակումներում Թումանյանի անձնական առաքինություններից անբաժան էին դիտվում նրա հասարակական առաքելությունները, որոնք նա իր ժողովրդի, առհասարակ մարդկության համար դժվար ժամանակներում կատարում էր անձնամոռաց նվիրվածությամբ՝ ապրելով մի կյանք, որ իրոք վառվեց ու «լույս տալով» սպառվեց:

Քիչ չէին նաև հրապարակումները կամ նամակները, որոնց հեղինակները բանաստեղծի շարքային երկրպագուներ էին, երիտասարդ ու տարեց, նաև այլազգի ընթերցողներ, որոնց անպաճույճ խոսքը ջերմացած էր անխառն զգացմունքով: Հույզերով զեղումնառատ գրությունների կողքին, անշուշտ, գրական-պատմական առումով առավել կարևորվում են այն հրապարակումները, որոնցում փորձեր են արվում վերլուծելու և արժևորելու բանաստեղծի երեսնամյա գեղարվեստական վաստակը: Հոդվածներից յուրաքանչյուրում Թումանյանի ստեղծագործական աշխարհը բացվում է հոդվածագրի դիտակետից՝ հաճախ երևան հանելով այնպիսի

շերտեր, որոնք սովորաբար տեսանելի են լինում պատմական որոշակի հեռավորությունից:

Վերլուծության մեթոդաբանության տեսակետից հոդվածները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբում Թումանյանի ստեղծագործությունը մեկնաբանվում ու արժևորվում է, կարելի է ասել, դասական գեղագիտության, երկրորդում՝ հասարակական-քաղաքական արդիականության, մասնավորապես քաղաքական կացության չափանիշներով:

Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ Թումանյանի ծննդյան 50-ամյակի տոնակատարությունները հայ մշակույթի պատմության մեջ մնացին եզակի և անկրկնելի:

ԳԼՈՒԽ 4.
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920-1923 ԹԹ. ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՄԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

Չորրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից. ներկայացնում է 1920-1923 թվականները, որ թումանյանագիտության պատմության մեջ կազմում են մի առանձին շրջան: Խորհրդային իշխանության առաջին տարիներն էին: Գրական-մշակութային արժեքների վերաիմաստավորման ու վերագնահատման գործընթացը, որ նախորդ տասնամյակին սկսել էր հայ մարքսիստական քննադատությունը, նոր պայմաններում, հատկապես «պրոլետարական» գաղափարախոսության ու գեղագիտության շրջանակներում բացահայտ մերժողականության աստիճան գերսկզբունքայնության պիտի հանգեցներ: Սակայն գերլարված այս մթնոլորտում անգամ չեն դադարում ժամանակի գրաքննադատության արձագանքները Հ. Թումանյանի՝ ստեղծագործական չորրորդ՝ ամենակարճ շրջանում (1920-1923) տպագրված ստեղծագործությունների, մասնավորապես քառյակների վերաբերյալ: Ենթագլխում հատուկ ուշադրության են արժանանում նաև 1922 թ. Պոլիս կատարած ճամփորդությունը և 1923 թ. Թումանյանին նվիրված հետմահու հրապարակումները:

4.1. Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ «ԵՐԵՔԻ» ՀՌՉԱԿԱԳՐԻ ԵՎ 20-ԱԿԱՆՆԵՐԻՆ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Այս բաժնում տրվում է XX դարի 20-ական թթ. սկզբին Խորհրդային Հայաստանում տիրող սոցիալ-քաղաքական, մշակութային նոր իրողությունների, գրական տարբեր միավորումների ընդհանուր պատկերը: Գաղափարական իրարամերժ հոսանքների համապատկերում գրական

ու գեղագիտական իր նպատակներով ավելի լուրջ նախաձեռնություն էր «Երեքի» գրական խմբակը, որը 1922 թ. հունիսի 14-ին հրապարակում է իր «Դեկլարացիան»՝ փորձելով ուղենշել հայոց նոր բանաստեղծության զարգացման հետագա ընթացքը: «Դեկլարացիայի» ընթացիկ արձագանքներին անդրադարձել ենք միայն ուսումնասիրության հիմնական խնդրադրության շրջանակներում:

«Մարքսիստական» քննադատությունը, հիմնավոր համարելով գրականության արմատական վերանորոգության անհրաժեշտությունը՝ դարաշրջանի հեղափոխական ոգուն համապատասխան, վերապահությամբ էր ընդունում անցյալի ավանդույթներից լիովին ձերբազատվելու պահանջը, «պրոլետգրողները» և նրանց պահապան քննադատությունը անվերապահ ողջունում էին «Երեքի» արմատականությունը, իսկ ինչ վերաբերում է հետագայում որոշակի պատմական հեռավորությունից հնչած գնահատականներին, ապա սկզբում դրանք գրեթե բացառապես մերժողական շեշտադրություն ունեն, իսկ ավելի ուշ ուսումնասիրություններում միտում է նկատվում առավել շրջահայաց մոտեցմամբ պարզաբանելու խնդիրը:

Հ. Թումանյանն ինքը հանգիստ ու անարձագանք էր հետևում դեկլարացիայի և Չարենցի հրապարակային ելույթների ու հոդվածների շուրջ ծավալվող բանավեճերին: Խորին ներքնատեսությամբ զգում էր, որ տեղի է ունենում անխուսափելի սերնդափոխություն, սկսվում է գեղագիտական մտածողության նոր շրջան, որը նոր պահանջներ է առաջադրում: Սակայն դեկլարացիայի ծայրահեղություններին լուրջ նշանակություն չէր տալիս. համոզված էր՝ մեծ հաշվով ոչինչ չէր փոխվելու հայ ժողովրդի դարավոր մշակույթի զարգացման ընթացքի մեջ:

Բայց եթե Թումանյանը Չարենցի և նրա համախոհների արմատականությանը, ծավալվող զարգացումներին հետևում էր ներհուն լռությամբ, ապա ընդդիմադիր քննադատությունը՝ ի դեմս Հ. Սուրխաթյանի, Ա. Կարինյանի, Պ. Մակինցյանի, Տ. Հախումյանի և այլոց, ազդարարում է սպառնալիքի մասին՝ սկիզբ դնելով բազմաբովանդակ ու մեծածավալ բանավեճերի, որոնց ակտիվորեն մասնակցում են նաև «նորարարների» համախոհները:

Չարենցը դեռ չէր հաղթահարել ինքնաորոնումների դժվարին փորձությունները, երբ վրա է հասնում Հ. Թումանյանի մահվան բոթը: 1923 թ. ապրիլի 3-ին «Խորհրդային Հայաստան» թերթում նա այդ առթիվ տպագրում է «Երկու աշխարհի սահմանագծում» հոդվածը: Դա յուրօրինակ ապաշավանք էր մեծ բանաստեղծի թարմ հիշատակի հանդեպ: Հետադարձ հայացքով Չարենցն ըստ էության նոր մոտեցում է հուշում նաև ապագա ուսումնասիրողին՝ դեկլարացիայի անվերապահ «մերժման» ենթատեքստը ճիշտ հասկանալու համար: Հ. Թումանյանի աշխարհը, ըստ Չարենցի, կենդանի մի հայելի է, որի մեջ մարդը տեսնում

է իր մանկությունը՝ անցած ու անվերադարձ: Հոդվածը գրելիս Չարենցը հանճարի ներզգացողությամբ ըմբռնում էր Թումանյանի մեծությունը, բացառիկությունը, բայց ժամանակի նորաշունչ ոգուն անդավաճան նրա էությունը դեռևս թույլ չէր տալիս լիովին հասու լինելու «զարմանալի զարմանք» այդ «կախարդ լոռեցու»՝ բոլոր ժամանակների համար ստեղծած համամարդկային արժեքների խորությանը:

1920-ական թթ. սկզբին պրոլետկուլտական գրականությունն ու գրական քննադատությունը ամբողջովին չէ, որ ուղղորդավորում էին տրամադրությունների հոսքը. 10-ական թվականների գրաքննադատության իներցիան դեռ չէր մարել: Ընդդիմադիր դաշտում գործում էր երկու ուղղություն՝ դասական արժեքները պաշտպանող և մարքսիստական, որ չէր ընդունում «Երեքի» ծայրահեղ արմատականությունը: Երկու կարգի հրապարակումներում էլ գրեթե մշտապես անդրադարձներ էին կատարվում Թումանյանի ստեղծագործությանը, բայց սովորաբար գրական կյանքին վերաբերող ընդհանրական հարցադրումների շրջանակներում: Նկատվում էր հետաքրքիր մի երևույթ. դեռ կենդանության օրոք Թումանյանը դարձել էր մի տեսակ արժեքներ գնահատելու դասական չափանիշ, որից սկսվում կամ դեպի որը միտվում էին գեղարվեստական տարաբնույթ իրակություններ:

4.2. Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ 1920-23 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ-ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Այս ենթագլխում ներկայացվում են «Քառյակներ» (1920, Թիֆլիս) ժողովածուի, ինչպես նաև Թումանյանի՝ 1922 թվին Պոլիս կատարած ճամփորդության արձագանքները:

Քառյակներ: Թումանյանագիտության գրեթե բոլոր երախտավորները մեծ կամ փոքր չափով անդրադարձել են Հ. Թումանյանի քառյակներին՝ փոքրաձավալ այդ ժանրում ընդգծելով նրա մեծությունը, «հումանիզմն ու կենսահայեցությունը»: Արժևորումները բազմաթիվ ու բազմաբնույթ են. տարժամանակյա քննությամբ հետագա ուսումնասիրողներն առավել ամբողջական ու համակողմանիորեն են ներկայացրել Հ. Թումանյանի քառյակների աշխարհը: Բայց ժամանակի քննադատական արձագանքների համադրական քննությունը ցույց է տալիս, որ դեռևս բանաստեղծի կենդանության օրոք այդ բազմաբովանդակ ու տարարժեք արձագանքներում, գուցե և ոչ այնքան համակարգված, նկատվել ու բնութագրվել են այդ աշխարհի մի քանի էատարրեր:

«Քառյակները» ժամանակի քննադատության համար դառնում է նոր փորձաքար՝ ոչ միայն խորահայաց քննաբանելու քառյակների կառուցվածքային ու գաղափարական ենթաշերտերը, նաև դրանց դերը Թումանյանի գեղարվեստական ժառանգության համատեքստում, այլև ինքնաբացահայտվելու. քառյակների մասին հնչող յուրաքանչյուր

դիտարկում հընթացս ուրվագծելու էր քննադատի գեղագիտական հայացքների ու մեթոդի կիրարկման համակարգը, քննական ու գեղագիտական մտածողության սահմանները:

Հ. Թումանյանի քառյակներին ժամանակի քննադատության համառոտ տեսությունից կարելի է անել երեք կարևոր հետևություն: Առաջին՝ այն, ինչ հետագա տասնամյակներին թումանյանագիտությունը դիտել ու վավերացրել է այդ բնագավառում, նախնական ձևով նկատել ու բնութագրել է բանաստեղծին ժամանակակից քննադատությունը: Երկրորդ՝ ինչպես այն ժամանակ, այնպես էլ հետագայում քառյակները դիտարկվել են Թումանյանի ստեղծագործության միասնական համակարգից համարյա մեկուսացված: Եվ երրորդ՝ երկու դեպքում էլ ծանրանալով հիմնականում քառյակների փիլիսոփայական ենթաշերտերի վրա՝ աչքաթող է արվել դրանց՝ իբրև գեղարվեստական համակարգի վերլուծությունը՝ իրեն հատուկ կառուցվածքային ու գեղագիտական յուրահատկություններով:

Առաքելություն Պոլիս: ՀՕԿ-ի կողմից պաշտոնապես լիազորված և ավելի քան մեկ ու կես ամիս տևած (1921, նոյեմբեր-դեկտեմբեր) այդ այցելության նպատակն ու մանրամասները բավականաչափ հայտնի են: Մեր ուսումնասիրության հիմնական հարցադրման շրջանակներում այդ երկու ամիսը առանձին հետաքրքրություն է ներկայացնում մի նկատառումով: Մինչ այդ արևմտահայ քննադատությունը տարբեր առիթներով ժամանակ առ ժամանակ անդրադարձել էր Թումանյանի ստեղծագործությանը: Բայց այդ կարճ ժամանակահատվածում պոլսահայ մամուլի հրապարակումները, ի դեմս նրա ստեղծագործության, ըստ էության ամփոփում-համակարգում էին արևմտահայ քննադատական մտքի մոտեցումները արևելահայ բանաստեղծության վերաբերմամբ:

Պոլսում հրատարակվող «Ժողովուրդի ձայնը», «Վերջին լուր», «Հայ կին», «Երկիր», «Ճակատամարտ» և այլ պարբերականներ երկու ամիս շարունակ տպագրում են հաղորդումներ ու հոդվածներ Հ. Թումանյանի հանդիպումների ելույթների, նրա պատվին կազմակերպված հավաքույթների, նաև կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ, որոնցից ուշարժանները ներկայացված են հանգամանալից: Օրինակ՝ առանձին ուշադրության են արժանի Հ. Թումանյանի այցը Պոլսի դպրոցասեր տիկնանց որբանոց և խնամակալուհի Անայիսի սրտառուչ ելույթը՝ ուղղված «ազգին սիրելի քերթողին»: Արևմտահայ նշանավոր բանաստեղծուհու խոսքը՝ հոգեբուխ, անկեղծ ու բանիմաց, Թումանյանի ստեղծագործության եզակի բնութագրերից է. արձակ բանաստեղծության պաթետիկ-զգացմունքային շղարշի հետևում գործում է երևույթը առարկայորեն գնահատող սուր տեսողությունը:

Թումանյանի պոլսական ուղևորությունը նշանավորվում է գրական մի նախաձեռնությամբ. բանաստեղծի առաջարկով ու աջակցությամբ Թիֆլիսի Հայարտան օրինակով Պոլսում հիմնվում է Հայ արվեստի

տուն: Աշխարհաքաղաքական նոր պայմաններում նա ակնկալում էր հայության երկու հատվածների մերձեցում, սերտ «եղբայրակցություն», որն աննախադեպ հեռանկարներ կարող էր բացել հայ գրականության արևելահայ ու արևմտահայ թևերի միավորման համար:

Պոլսահայ միջավայրում հետաքրքրությունը գնալով աճում է՝ ոչ միայն պայմանավորված Թումանյանի այցի հասարակական նշանակությամբ, այլև առաջին անգամ ազգային բանաստեղծին դեմառդեմ հանդիպելու, նրա ստեղծագործական աշխարհը մոտիկից ճանաչելու մղումով: Մամուլում տպագրվող հոդվածները՝ մակերեսային կամ բանիմաց վերլուծություններով, փորձում էին բացահայտել բանաստեղծի ստեղծագործության անօրինակ հմայքի գաղտնիքը:

Նոյեմբերի 27-ին Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթում սկսում է տպագրվել Հ. Օշականի «Հովհաննես Թումանյան» ծավալուն հոդվածը, որ բանաստեղծի ստեղծագործության ամբողջական ուսումնասիրության առաջին փորձն էր արևմտահայ քննադատության մեջ: Անկախ իր հաճախ անմիանշանակ, երբեմն իրարամերժ դիտարկումներից՝ հիմնականի մեջ Օշականն անվերապահ է. Թումանյանի ստեղծագործական աշխարհից լուսարձակում է «մեր ցեղին հոգիին նման, «ազնվական բարություն մը», որն իբրև պահապան ոգի իշխում է բոլոր գործերում: Թումանյանը չի հեգնում, չի կարծրանում, չի լացում. ազնվական տրտմությամբ տանում է իրեն ու իր ժողովրդին բաժին հասած ցավը, շարունակում երգել բնություն, սեր ու գեղեցկություն ու հետո հանգչելով՝ դարձյալ նետվում «յոթը լեռներեն անդին գտնելու համար սրբազան կրակը որ ցեղի մը սիրտը տաքցնե»[18]:

Պոլիս կատարած ճամփորդությունը մեկ անգամ ևս հաստատում է այն ճշմարտությունը, որ, չնայած արևելահայ ու արևմտահայ գրական դպրոցների գեղագիտական հայացքների ակնհայտ հակասությանը, Հ. Թումանյանը ճանաչված ու ընդունված է եղել թե՛ իբրև բանաստեղծ, թե՛ իբրև ժողովրդի կողմից անվերապահորեն սիրված ու վստահություն ստացած անհատականություն:

4.3. Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՀԵՏՄԱՀՈՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

Այս ենթագլխում ի մի են բերվել և ներկայացվել բանաստեղծի մահվան առիթով գրված հրապարակումները: Թումանյանի մահը վերածվում է համաժողովրդական սգահանդեսի, իսկ 1923 թվականը դառնում է թումանյանական յուրօրինակ տարի: Մինչև տարեվերջ մամուլը ողողված է մնում բանաստեղծի մասին հրապարակումներով: Դրանց զգալի մասը տարբեր կողմերից վերլուծում ու արժեքավորում էր մի բացառիկ գրական երևույթ, որ արդեն դառնում էր պատմություն: Ամեն մեկն աշխատում էր առավել սթափ, պատմական հետհայացք նետել նրա վաստակին, հայտնաբերել ի՛ր Թումանյանին: Նկատի

[18] «Ճակատամարտ», հմ. 927, Կ.Պոլիս, 1921:

ունենալով մեր ուսումնասիրության նպատակն ու խնդրադրությունը՝ այդ ընդարձակածավալ նյութից՝ պատմաքննական տեսություններ և հուշեր, առանձնացրել ենք այն մասը, որ, մեր կարծիքով, գրական-պատմական որոշակի արժեք է ներկայացնում և հիմք է դարձել թումանյանագիտության հետագա զարգացմանը:

Հետմահու հրապարակումներում Թումանյանի անձնական առաքինություններից անբաժան էին դիտվում նրա հասարակական հանձնառությունները, որ նա իր ժողովրդի, առհասարակ մարդու համար դժվար պահերին կատարում էր անձնուրաց նվիրումով: Բազմաթիվ ու բազմաբնույթ այդպիսի վկայություններից բերել ենք, օրինակ, Վրաստանի ժողովրդական լուսավորության կոմիսար Դ. Կանդելակիի ցավակցական նամակը բանաստեղծի ընտանիքին: «Մարտակոչը» իր 41-րդ համարն ամբողջովին նվիրում է բանաստեղծին, նրա ստեղծագործական աշխարհի տարակերպ մեկնաբանություններին: Հոդվածագիրները, սրտի խոսքը ձևակերպելով մտքի հնարավորություններով, փորձում են իրենց խոնարհումը բերել բանաստեղծի հիշատակին:

Մամուլի հրապարակումներից գրական-պատմական առումով կարևորել ենք հատկապես նրանք, որտեղ փորձ է արվում տարբեր կողմերից վերլուծել և արժևորել բանաստեղծի գեղարվեստական վաստակը: Վերլուծության մեթոդաբանության տեսանկյունից հոդվածները բաժանվում են երկու մասի: Մի մասում Թումանյանի ստեղծագործությունը վերլուծվում ու արժևորվում է ժամանակի հասարակական-քաղաքական իրադրության, մյուսում՝ դասական գեղագիտության չափանիշներով:

Թումանյանի մահվան կապակցությամբ գրված հոդվածների համաբնագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բանաստեղծը ժամանակի կենտրոնաձիգ ուժն էր, որ դարձել էր հայ ժողովրդի հավաքական հիշողության ու հոգեբանական գոյավորման կեցուցիչը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 19-րդ դարավերջին հասարակական հոսանքների սոցիալ-ազգային, փիլիսոփայական հայեցությունն իր ուղղակի ազդեցությունն է ունեցել հոգևոր-մշակութային կյանքի բոլոր ոլորտներում, մասնավորապես գեղարվեստական գրականության ու գրական քննադատության գաղափարական ու գեղագիտական հայեցակարգերի վրա: Սակայն որքան էլ հակասական ու իրարամերժ թվային դրանց՝ ազգապահպանությանն ու հասարակական առաջընթացին ուղղված կարգախոսները, այնուամենայնիվ փոխադարձ բացասման մեջ ակնհայտ էր հատման կետը, ազգային ոգու գոյաբանական հիմքի ու խորհրդի որոնումը, հոգևոր ինքնության գիտակցության արժևորումը, բայց ոչ իբրև

ներփակ գոյության, այլ համաշխարհային մշակույթի ու մտածական շարժընթացի անկապտելի մաս:

2. Գրականությունն իր զարգացման ընթացքում, ի մասնավորի 1890-1923 թվականներին քննադատության առջև դնում է նոր խնդիրներ, հարկադրում դիմել նոր մոտեցումների, հարցադրումների, մեթոդների: Արձագանքելով ժամանակի օրախնդիր պահանջներին՝ քննադատությունն աստիճանաբար ձևավորում է իր տիպաբանությունը, ըստ այդմ՝ ձեռք բերելով ժանրային բազմազանություն, գրական երկերի գեղագիտական ու փիլիսոփայական գնահատման նոր չափանիշներ, մասնագիտական բառապաշար և նշանային գործիքակազմ:
3. Ուսումնասիրվող ժամանակահատվածում քննադատությունը դեռևս զուրկ էր համակարգային կանոնիկությունից: Ձևավորված գրականագիտական մեթոդները՝ յուրօրինակ նշանային համակարգով ու գործիքակազմով, գիտականության՝ մեթոդական իմաստով նշանակիր դաշտ են փոխադրում գրական երկի վերլուծությունը: Արդյունքում՝ Հ. Թումանյանի ստեղծագործության արժևորումները երբեմն աչքի էին ընկնում հակասականությամբ, առաջ քաշած հարցադրումները՝ վիճարկելիությամբ:
4. Հ. Թումանյանի ստեղծագործությունների առիթով ստեղծված քննադատական հոդվածների «համահավաք» բնագիրը, որ ընդգրկում է հնարավոր գրեթե բոլոր արձագանքները, հնարավորություն է տալիս ստեղծելու թումանյանական աշխարհի մեկնաբանության համընդհանուր դաշտ՝ ընդսմին՝ ներառելով գրական նույն ստեղծագործության վերաբերյալ շրջանառված գեղագիտական, հոգեբանական, մշակութաբանական խիստ հետաքրքիր ու տարաբնույթ հարցադրումներ:
5. Հ. Թումանյանի ստեղծագործության առաջին քննադատները ենթագիտակցական կռահումով նրա գրական մուտքի մեջ անմիջապես նկատում են անսովոր հետաքրքրություն արթնացնող ստեղծագործական կայծեր. նախ՝ հաստատում են նրա ստեղծագործական նկարագրի էպիկական բնույթը, ընդգծում երիտասարդ բանաստեղծի մտքերի թարմությունը, զգացմունքների ուժգնությունը, երևակայության անհասանելի թռիչքները, որոնք թումանյանական արվեստի կարևոր հատկանիշներից են:
6. Երեք տասնամյակների ընթացքում, երբ Հ. Թումանյանին ուղեկից գրական քննադատությունը արձագանքում է բանաստեղծի գրական գործունեությանը, քննադատության վերաբերմունքի և արժևորումների մեջ կատարվում են էական տեղաշարժեր: Ժամանակի ընթացքում փոփոխության են ենթարկվում Հ. Թումանյանի ստեղծագործությունների հասարակական ընկալումն

ու գնահատականը, և ի դեմս ժամանակի քննադատության լավագույն ներկայացուցիչների՝ աստիճանաբար բացահայտվում են Թումանյանի հանճարի համազգային ու համամարդկային բնույթը, գեղարվեստական մտածողության բացառիկությունը:

7. Ժամանակի գրաքննադատական մտքի ամբողջական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հ. Թումանյանի կենդանության օրոք քննադատությունը բանաստեղծի երկերին նվիրված համապարփակ, ամբողջական ուսումնասիրություն չի ստեղծել. քննական յուրաքանչյուր խոսք ի հայտ է բերել բանաստեղծի ստեղծագործական աշխարհը բնութագրող մեկ-երկու նշանակիր դրույթ, որը, անշուշտ, կարևոր խթան է եղել հետագա տասնամյակներին թումանյանագիտության զարգացման համար:
8. Դեռ կենդանության օրոք Հ. Թումանյանը դառնում է արժեքներ գնահատելու դասական չափանիշ, որից սկսվում կամ դեպի որը միտվում էին գեղարվեստական տարաբնույթ իրակություններ:
9. Հ. Թումանյանի կենդանության ժամանակ, նաև մահվան կապակցությամբ գրված հոդվածների համաբնագրի ուսումնասիրությունը տեսանելի է դարձնում անառարկելի մի փաստ. բանաստեղծը ժամանակի կենտրոնաձիգ ուժն էր, որ, կամա թե ակամա հայտնվելով տարբեր ժամանակների ու տարածությունների հատման խաչմերուկում, դարձել էր ժողովրդի հավաքական հիշողության ու կեցության կենդանի շարժիչն ու սնուցիչը:
10. Քննադատական առկա դիտարկումները, սակայն, ամբողջությամբ չեն սպառում խնդրի հետազոտության շրջանակները, որի պատճառով անգամ այսօր զգացվում է ժամանակաշրջանի գրականության պատմությունը և մշակութային կյանքը առավել ամբողջական ներկայացնելու անհրաժեշտություն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

մենագրություններ

Բանավեճերը գրական հայերենի շուրջ և Հովհաննես Թումանյանը, Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2017, 360 էջ:

Հովհաննես Թումանյանը ժամանակի գրաքննադատական մտքի գնահատությամբ, հատոր 1 (Անթոլոգիա. կազմող, ծանոթագրող, հրատարակության պատրաստող), Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2019, 680 էջ:

հոդվածներ

1. Թումանյանի ստեղծագործությունների գնահատումը «Մշակի» էջերում, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի

զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 353-356:
2. Թումանյանի ստեղծագործությունների լեզուն ժամանակի գրաքննադատության գնահատմամբ, Գիտական տեղեկագիր, N1, պրակ Բ, Գյումրի, 2014, էջ 34-43:
3. Ժամանակի քննադատությունը և Թումանյանը փոխառությունների հարցի շուրջ, Հայագիտական հանդես, N 4 (28), Երևան, 2014, էջ 16-25:
4. Յովհաննէս Թումանեանը եւ Հայոց Համազգային մեծ ողբերգութիւնը, Բազմավէպ, թիվ 1-2, Վենետիկ - Ս. Ղազար, 2015, էջ 311-328:
5. Հ. Թումանյանի «Հայրենիքիս հետ» ժողովածուի արձագանքները, Գրականագիտական հանդես, ԺԶ, Երևան, Անտարես, 2015, էջ 86-95:
6. Թումանյանի «Լոռեցի Սաքոն» ժամանակի գնահատմամբ, Հայկազեան հայագիտական հանդէս, Պէյրութ, Haigazian Universiti Press, էջ 431- 444, 2016:
7. Ժամանակի քննադատությունը Թումանյանի թարգմանական արվեստի մասին, Հայագիտական հանդես, N 1 (31), Երևան, 2016, էջ 30-38:
8. Դավիթ Անանունի «Անցյալի մեծարանքը», Բանբեր հայագիտության, N 3 (12), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրտ., Երևան, 2016, էջ 159-173:
9. XIX դարի 90-ական թթ. քննադատությունը և Թումանյանը, Գրականագիտական հանդես, ԺԷ, Երևան, Արմավ, 2016, էջ 44-54:
10. Թումանեանի ստեղծագործութեան արժէւորման փորձերը «Բազմավէպ» հանդէսի էջերում (1890-1923)», Բազմավէպ, թիւ 1-2, Վենետիկ - Ս. Ղազար, 2016, էջ 248-269:
11. The Armenian translations of ''Hamlet'' in the Appraials of Great Armenian Poet Hovhannes Toumanyan, Բանբեր հայագիտության, N 2 (14), 2017, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրտ., Երևան, էջ 140-150:
12. Путешествие Валерия Брюсова на Кавказ, атнология «Поэзия Армении» и Ованес Туманян», “Гуманитарные и юридические исследования”, выпуск № 4, Ставрополь, Отпечатано в Издательско-полиграфическом комплексе ФГАОУ ВО «Северо-Кавказский федеральный университет» 2017, стр. 203-209.
13. Թումանյանի 50-ամյակի հոբելյանական հանդիսությունների արձագանքները մամուլում, Պատմաբանասիրական հանդես, թիվ 3, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրտ., 2017, էջ 91-103:
14. Հ. Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմը ժամանակի գրաքննադատության գնահատմամբ, Էջմիածին, հտ. Ժ, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպ., 2017, էջ 139-149:

15. Թումանեանը եւ Բանավէճերը Բանահիւսական Թեմաների Գրական Մշակումների Շուրջ, Հայկազեան հայագիտական հանդէս, Պէյրութ, Haigazian Universiti Press, 2018, էջ 405-420:
16. XIX դարավերջի հայ գրաքննադատության զարգացման միտումները, Պատմաբանասիրական հանդես, թիվ 2, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրտ., 2018, էջ 135-153:
17. Հովհաննես Թումանյանը Պողոս Մակինցյանի գնահատմամբ, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, Միսմա ՍՊԸ, 2018, էջ 324-336:
18. XX դարասկզբի գրական քննադատության մեթոդաբանական տարբերությունները և Հովհաննես Թումանյանը, Պատմաբանասիրական հանդես, թիվ 1, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրտ., 2019, էջ 30-50:
19. The Literary Critical Perspective of Toumanyan's Poem Anush, «Բանբեր հայագիտության», N1 (19), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, էջ 165-179:
20. Թումանեանի յայտնութիւնը 50-ամեակի յոբելեանական հրապարակումներում, Հայկազեան հայագիտական հանդէս, հտ. 39, Պէյրութ, Haigazian Universiti Press, 2019, էջ 313-333:
21. Արսեն Տերտերյանի «Հայրենի եզերքի քնարերգուն», Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու (նվիրված Պողոս Խաչատրյանի ծննդյան 90-ամյակին), Երևան, «Միսմա» ՍՊԸ, 2020, էջ 287-301:
22. 1910-ական թվականների քննադատական մտքի մի քանի ուրվագծեր, Գրականագիտական հանդես, ԻԱ, թիվ 2, Երևան, «Արմավ» հրտ., 2020, էջ 126-151:
23. Ованес Туманян в оценке русской литературной критики своего времени, Deutsche internationale Zeitschrift für zeitgenössische Wissenschaft, N3, vol. 2, DIZZW, Satteldorf, Deufschland, 2020, էջ 37-40:
24. Յովհաննէս Թումանեանը «Երեքի» հռչակագրի եւ Ի. դարի 20-ական թթ. սկզբի գրաքննադատութեան տեսադաշտում, Հանդէս ամսօրեայ, թիվ 1-12, Վիեննա, Մխիթարեան հրտ., 2020, էջ 153-180:
25. H. Tumanyan: The Evaluation of Russian Intellectuals of the Time, Բանբեր հայագիտության, N 1 (25), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրտ., 2021, էջ 214-226:
26. Worldview and Ideological Tendencies of the Late 19th and Early 20th Centuries in Armenian Literary Criticism, Wisdom, 3 (19), Erevan, 2021, p. 35-44:

ЕВА ЖОРАЕВНА МНАЦАКАНЯН

ПРОИЗВЕДЕНИЯ ОВАНЕСА ТУМАНЯНА В ОЦЕНКЕ ЛИТЕРАТУРНО-КРИТИЧЕСКОЙ МЫСЛИ СВОЕГО ВРЕМЕНИ

Автореферат диссертации на соискание ученой степени доктора филологических наук по специальности 10. 01. 01 - “Армянская классическая литература”.

Защита диссертации состоится 10 декабря 2021г., в 12:30 часов, на заседании специализиронного совета высшей аттестационной комиссии 003 Литературоведение, действующего в НАН РА институте литературы им. М. Абегяна.

Адрес: 0015 Ереван, ул. Григора Лусаворича 15.

РЕЗЮМЕ

Диссертация представляет целостное исследование литературной критики на протяжении более трех десятилетий, сопровождающей творчество Ов.Туманяна. Собранные разноплановые и масштабные материалы - статьи, рецензии, публицистические обзоры, большие и малые монографические исследования - представляют исключительный интерес не только с точки зрения обзора и оценки многожанрового творчества и литературной деятельности Туманяна, но и с точки зрения развития армянской литературно-критической мысли и выявления тенденций эстетических принципов в период с 1890-1923 гг.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения и списка литературы.

Во **введении** представлена проблема необходимости исторического исследования мнений и взглядов, звучащих в свое время относительно литературно-творческого наследия Ов. Туманяна, а также уже существующие в истории туманяноведения знаковые и ценные исследования и статьи. Указаны также критерии периодизации творческого пути поэта, актуальность исследования, цель, задачи, методологическая основа, практическая значимость.

В **первой главе** («Произведения Ов. Туманяна в оценке литературной критики 90-х годов XIX века»), состоящей из пяти подглав, представлены проблемы литературы и критики, оказавшихся в центре разногласий и идеологических споров разных социальных течений 90-х годов XIX века. Здесь также представлены критические отзывы о первом, возвещающем о литературном восхождении Туманяна, сборнике «Стихотворения» (1890), а затем втором (1892), о выделяющейся в ряду поэм своей творческой судьбой поэме «Лориец Сако» (1896) и о переводах («Шильонский узник», «Мцыри»).

Во **второй главе** («Произведения Ов. Туманяна в оценке литературной критики 1900-х годов»), состоящей из четырех подглав, представлены значительные сдвиги в общественной и национальной жизни 1900-х годов, которые вызвали определенные качественные изменения как в культурной жизни, так и в художественном сознании того времени. В истории армянской новой литературы этот период отличается беспрецедентным разнообразием и замысловатыми пересечениями эстетических течений и направлений. Они рассматриваются с двух точек зрения: с позиций литературно-критической среды того времени и присущих ему теоретико-эстетических принципов, отражающих общественные нормы, а также в этих рамках оценку творчества Туманяна, как типичного примера естественного выражения этих принципов. Подробному изучению подвергаются отзывы литературной критики того времени как об опубликованных во второй период творчества (1900-1909) произведениях Туманяна, в частности, о ставшем настоящим пионером большого творческого полета поэта третьем сборнике «Стихотворений» (1903), так и о таланте Туманяна создавать детские произведения и развивать тему народа. Этот этап творчества можно считать наиболее плодотворным, а по оценкам - наиболее разнообразным.

Третья глава («Произведения Ов. Туманяна в оценке литературной критики 1910-х годов»), состоящая из шести подглав, представляет новые и многогранные проявления мировоззрения литературно-критической мысли 1910-х годов, новые критерии оценки художественной литературы, методологические принципы, мировоззренческие различия. На этом фоне фиксируются основные тенденции восприятия и критерии оценки, заслуживающие внимания литературных критиков того времени, произведений Ов. Туманяна, опубликованных в третьем творческом периоде (1910-1919).

Четвертая глава («Произведения Ов. Туманяна 1920-1923 годов на стыке традиций и инноваций»), состоящая из трех подглав, посвящена 1920-1923 годам, которые составляют отдельный период в туманяноведении. В атмосфере переосмысления и переоценки литературных и культурных ценностей не утихают отголоски литературно-критических обзоров того времени произведений Ов. Туманяна, опубликованных за самый короткий период творчества (1920-1923), в частности, его четверостиший. В этой главе особое внимание уделяется поездке поэта в 1922 году в Константинополь, а также посвященным Туманяну посмертным публикациям 1923 года.

Еще при жизни Ов. Туманян становится классическим критерием оценки ценностей, от которого исходили или к которым стремились различные художественные реалии. Однако, нынешние критические наблюдения полностью не исчерпывают объем рамок изучения проблемы, в связи с чем даже сегодня существует необходимость представить более полную картину истории литературы того периода и культурной жизни.

YEVA ZHORA MNATSAKANYAN

HOVHANNES TUMANYAN'S WORKS ACCORDING TO THE EVALUATION OF LITERARY CRITICAL THOUGHT OF THAT TIME

10. 01.01 - Dissertation for the degree of Doctor of Philology, on the specialization of "Armenian Classical Literature"

The defense will take place on December 10, 2021, at 12:30 at the session of the 003 of the Council of Literary Studies of Higher Qualification comittee of NAS of RA, Institute of Literature after M. Abeghyan.

Address: 0015 Yerevan, 15 Grigor Lusavorich.

SUMMARY

The dissertation presents a complete study of the literary criticism that accompanies Tumanyan's work for more than three decades. The collected diverse and large-scale materials such as articles, reviews, journalistic guides, large and small monographic studies are of exceptional interest not only from the point of view of the evaluation and estimation of Tumanyan's multi-genre work and literary activity, but also from the point of view of the terms of revealing the tendencies and aesthetic principles of the development of the Armenian literary-critical thought in the period of years 1890-1923.

The dissertation consists of the introduction, four chapters, the conclusion and the list of references.

The introduction presents the problem of the necessity for a historical examination of the opinions and views on Hovhannes Tumanyan's literary-creative heritage as well as the existing significant and valuable studies and articles in the field of Tumanyan's creative work study. The criteria for the periodization of the poet's literary work, the urgency of the study, its objectives, problems, the methodological bases and the practical significance are pointed out.

The first chapter ("H. Tumanyan's works according to the evaluation of literary criticism in the 90s of the XIX century"), consists of five subchapters and presents the problems of literature and criticism that occur in the focus of ideological controversies on the social currents the works of the 90s of the XIX century. Some critical reviews are presented on Tumanyan's first collection entitled "Poems" (1890) which announced literary entry of the poet, then on the second book (1892), as well as on the poem "Sako from Lory", which is specially singled out in the number of other poems by its creative fate (1896) and on the translations ("Prisoner of Chilion", "Mtsiri").

The second chapter ("H. Tumanyan's works according to the evaluation of literary criticism in the 1900s"), which consists of four subchapters, presents

the significant displacements of social and national life of the beginning of 1900s, which brought about certain qualitative changes in the cultural life and in the artistic consciousness of the time. In the history of New Armenian literature, this period is distinguished by unprecedented variegation and intricate intersections of aesthetic currents and directions. We have referred to them from two points of view, as the typical expression of the literary environment of the time and the natural expression of aesthetic-theoretical principles and manners, and then as the evaluation of Tumanyan's work taking it as a typical example of that time. The responses of the literary criticism of the time about Tumanyan's works published in the second creative period (1900-1909), particularly about the third collection of "Poems" (1903), which became a real pioneer of the great creative flight, as well as about Tumanyan's talent for creating children stories and developing folk themes are subjected to a detailed examination. This creative period can be considered the most fruitful, and by the critical reviews it is the most variegated.

The third chapter ("H. Tumanyan's works according to the evaluation of literary criticism in the 1910s"), which consists of six subchapters, presents the new and multifaceted worldview manifestations of the literary criticism of the 1910s, new criteria for evaluating fiction, methodological principles, and worldview differences. On this background, the main tendencies of perception and the criteria of the evaluation of Tumanyan's works published in the third creative period are grounded (1910-1919), and which are worthy of attention and examination by the literary critics of that time are fixed.

The fourth chapter ("Tumanyan's works of 1920-1923 at the crossroad of the tradition and innovation"), which consists of three subchapters, presents the years 1920-1923, which form a separate period in the history of Tumanyan's creative work study. In the atmosphere of reinterpretation and reevaluation of literary and cultural values, the echoes of the book review of that time on Tumanyan's woks, published in the shortest fourth creative period (1920-1923), in particular, on his quatrains do not stop. In this chapter, a special attention is paid to the poet's trip to Constantinople in 1922 as well as posthumous publications dedicated to Tumanyan in 1923.

While still alive H. Tumanyan becomes a classic criterion for valuing merits, from which various artistic realities begin or tend towards to. The current critical observations, however, do not completely exhaust the scope of the study of the problem, due to which even today there is a need to present a more complete history of the literature of the period and the cultural life.